№ 250 ՇԱԲԱԹ 9 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱԲԱԹ 9 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 250

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք է վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) —20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Кº, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարիզում՝ Площадь Биржи 8

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտարարելու, որ կիրակի, նոյեմբերի 10-ին, Գանձարանի հանգուցեալ

ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ

յիշատակին կատարվելու է հանգիստ հոգեհանգիստ Վանքի եկեղեցում, առաւօտեան ժամը 12-ին։

1012. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, նոյեմբերի 11-ին

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
կը ներկայացնէ երկրորդ անգամ Վ. ԳԷՕԹԷԻ

ՖԱՈՒՍՏ

Ողբերգութիւն 16 պատկերով, թարգմ. Սևումեանի։
(ՈՐՈՇ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՄԲ)

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Ադամեան, Աշխէն, Լիւսի-Սևումեան, Մանուչարեան, Ցասմիկ, պ. պ. Ալլահվերդեան, Բերոյեան, Զարիֆեան, Թաշճեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Մուրադեան, Սևումեան, Տէր-Առաքելեան, Օվի-Ահարոնեան, աշխատակից-աշխատակցուհիներ և ուրիշները։

Երաժշտութիւն Մանիկին-Նևվստրուևի։

Երգեցիկ խումբ ղեկավարութեամբ Միրզոյեանի։

Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։

Տեղերի գները սովորական են։
Ռեժիսսօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ

ԱԶԴ.—Նոյեմբերի 18-ին կը ներկայացվի Շիրվանզադէի «ՉԱՐ ՈԳԻ» պիեսը։

1013 2—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. Խորհուրդը

հրաւիրում է պ. պ. անդամներին Ընկերութեան

II ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,

որը կայանալու է այսօր, շաբաթ, նոյեմբ. 9-ին, երեկոյեան ժամը 7½-ին, Ընկ. դահլիճում (Երիւ-Երևանեան հրապարակ, № 7, սեփ. տուն)։

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Մի քանի ճիւղերի նախահաշիւների քննութիւնը և հաստատումը։
2) Առևտրական բանկի ակցիաներ գնելու մասին։
3) Զեկուցումն հանգուցեալ Նինա Տէր-Ղազարեանի կտակի և Փեփրոնիա Զարգարեանի նուիրատուութեան մասին։
4) Զեկուցումն Պեատիգորսկի ուսուցչական սանատորիային օգնելու հարցի մասին։
5) Ընկերութեան ընդհանուր լիազօր ունենալու հարցը։
6) Զեկուցումն պ. Ա. Աթանասեանի՝ լեռնային շրջաններում անբերրիութիւնից տուժած գիւղացիների կարիքների մասին։
7) Ընթացիկ հարցեր։

Այս ժողովը լինելով երկրորդը՝ կայանալու է որքան անդամ էլ ներկայ լինի։

տռ. 1011. 2—2

„Նուէր Մանուկներին“ Ընկ. հերթական Ընդհանուր ժողովը

տեղի է ունենալու Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում նոյեմբերի 10-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11½-ին։

ՕՐԱԿԱՐԳՆ Է՝ 1) 1914 թւի «ՀԱՍԿԵՐ» ամսագրի և այլ հրատարակութիւնների նախահաշիւ, նաև գործունէութեան ծրագրի քննութիւնը։ 2) Վարչութեան 3 անդամի, 2 փոխ-անդամի և վերստուգիչ մասնաժողովի բոլոր անդամների ընտրութիւնը։

Ժողովը լինելով երկրորդ անգամը՝ կը կայանայ որքան անդամ էլ ներկայ լինի։

(շ.) տռ. 1003. 2—2

Առաջնակարգ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Այսօր, շաբաթ, նոյեմբերի 9-ին, տեղի կունենայ ցիրկային խաղեր ներկայացում մասնակցութեամբ բոլոր արտիստների։ Ըմբշամարտին—Սէպնիկը՝ Սալի-Սուլէյմանի հետ, Նէգր Չէմբէրս Ծիպսը Լուկա Կոպլիճվի հետ, Կարմիր՝ մասկան՝ Ժան-Սարաթիէի հետ, Իվան Կայինը՝ Նէգր Տոմ-Սայէրի հետ։

Ներկայացման սկիզբը ժամը 8-ին, ըմբշամարտի սկիզբը ժամը 9½-ին, իսկ ներկայացման աւարտը ժամը 11-ին։

տռ. 1014. 1—1



Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Վերադառնալով արտասահմանից վերանորոգից ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԷՎՄՕՏՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՌԷՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23, тел. 7—92.

(ա.օ.) տռ. 977. 100—8

ԿՈՐՑՐԵԼ ԵՄ ԽԱՂԱՐԿՈՒ ՏՈՄՍԵՐ

I փոխառութեան № 12153/40.
II » № 16599/41.

Խնդրում եմ գտնողներին յանձնել Գանձակում ինձ և ստանալ 200 ռ. վարձատրութիւն։

ՊԱՒԷԼ ՆԱՆԱՍԵԱՆՑ

(ա. օ.) տռ. 1010. 3—2

ԲԺԻՇԿ

Ե. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ հիւանդութիւններ։
(Առանձն. կրծքի, Թոքախտի և սրտան պակասութեան)

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Ամեն օր (Առաւօտեան ժ. 12—2-ը
(Երեկոյեան ժ. 5—7-ը

Իրաֆսկայա, 3 (Լօրիս-Մելիքօվսկայա փողոցի կողմից)

(Ե.Հ.Կ.) տռ. 774. 100—23

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Դպրոցական ֆոնդ կայ արդէն։

Գոնէ դրված է նրա հիմքը, չը նայելով զանազան խոչընդոտներին, ուրոնք յարուցվեցին նրա դէմ։

Որքան մենք գիտենք, մօտ կէս միլիօն ռուբլի գումար է հաւաքվել մինչև այսօր, ինչպէս ցոյց է տալիս «Մշակի» մէջ այսօր տպված տեղեկութիւնը։

Ընդհանուր դպրոցական ֆոնդ կազմելու համար դա աննշան, չնչին գումար է և բնաւ պատիւ չէ բերում մեր ազգային ինքնագիտակցութեան ու արժանապատուութեան։

Ազգովին տօնեցինք, սկսեալ Նէվայի ափերից մինչև Գանգէսի ափերը հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի համազգային յօբելեանը, և այդ յօբելեանը յաւերժացնելու սահմանված դպրոցական ֆօնդին նուիրաբերեցինք միայն կէս միլիօն, այն էլ մեծ մասը գոյացած կտակներից և այս կամ այն հաստատութեան յատկացումներից։ Ամբողջ ազգի մէջ չեղաւ մի փառաւոր ժեստ կատարող անձն, ամբողջ ազգի մէջ չը գտնվեց մեր միլիօնատէրերից մէկը, որ միանգամից գոնէ 100,000 ռ. նուիրէր այդ վեհ և մեծ նպատակի համար։

Այդ բաւական չէ, մենք աշխատեցինք նոյն իսկ ջլատել, անդամալուծել հանգանակութեան գործը մեր ներքին երկպառակութիւններով, անտեղի և անժամանակ ծրագիրներով։

Բայց այնու ամենայնիւ դպրոցական ֆօնդի հիմքը դրված է։

Գործը սկսված է և, ինչպէս ասում են ֆրանսիացիները, գործի սկիզբը—գործի կէսն է։

Մի անգամ որ հիմքը դրված է, նա կարող է հետզհետէ զարգանալ, աճել, որովհետև կը լինեն այսուհետև էլ կտակներ, նուիրաբերութիւններ և ժամանակի ընթացքում դպրոցական ֆօնդը կաճէ, կուռճանայ և վերջ ի վերջոյ կաթիլներից կը կազմվեն վտակներ, գետեր։

Հարկաւոր է այժմ կազմակերպել գործը, լաւ և առողջ հիմքերի վրա դնել նրան։

Էջմիածինը, ուր կենտրոնացած է դպրոցական ֆօնդը, միայն աւանդապահ է։ Նա չէ կարող ինքը վարել գործը և պէտք ունի ժողովրդի աջակցութեան, քանի որ գործն էլ խորապէս ժողովրդական է։

Ամենից առաջ պէտք է մշակվի և հաստատվի ֆօնդի կանոնադրութիւնը։ Այդ կանոնադրութեան ծրագիրը պէտք է մշակվի և խմբագրվի ձեռնհաս անձերից կազմված մի մասնաժողովի կողմից, նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսից կարգված սինօդի անդամներից մէկի և առաջարկվի մամուլի ու թեմական տեսուչների քննութեան և ապա, վերջնականապէս խմբագրվելով, հաստատվի Կաթողիկոսի կողմից։ Ֆօնդի պահպանութեան, շահագործման եղանակի և նրա գործադրութեան պաշտօնը պէտք է յանձնվի մի յատուկ յանձնաժողովի, որի անդամներ պէտք է լինեն ամեն մի թեմի ժողովրդի կողմից ընտրված երկու ներկայացուցիչներ. իսկ եթէ դպրոցական ֆօնդը լինելու է համազգային, նաև՝ Թիւրքիայի և Պարսկաստանի հայութեան ազգային վարչութիւնների ներկայացուցիչները։ Այդ յանձնաժողովը, նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կամ նրա ներկայացուցչի, տարեկան երկու անգամ կը գումարվի Էջմիածնում և կը տնօրինէ բոլոր գործերը, յանձնելով գործադրութիւնը մի մշտական բիւրօյի, կից սինօդին, կամ իրան՝ սինօդին։

Մենք ընդգծեցինք կանոնադրութեան էական կէտերը, զանց առնելով մանրամասնութիւնները։

Մենք կամեցանք շեշտել այն հանգամանքը, որ դպրոցական ֆօնդի վարումը, տնօրէնութիւնը պէտք է կատարվի ժողովրդի ներկայացուցիչների ձեռքով, որպէս զի գործը լինի արդիւնաւէտ և նպատակայարմար։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 նոյեմբերի

Լիվադիա.—Պաշտօնական։ Նոյեմբերի 7-ին Նորին Մեծութեանը բաղդ ունեցաւ ներկայանալ և հրաւիրվեց Բարձրագոյն նախաճաշի Բաթումի շրջանի զինւորական նահանգապետ գեներալ-մայոր Ռոմանովսկի-Ռոմանկօն։

Պետերբուրգ.—Լեվ Տօլստոյի մահվան տարելիցին, Գրականական Ֆօնդը կազմեց երեկոյթ, նուիրված մեծ գրողի յիշատակին։ Ճառեցին Նոբոկովը և Բատիւշկովը։ Պետական Խորհրդի անդամ Ստախովիչը կարդաց «Կրէյցերեան Սոնատի» անտիպ վարիանտը։ Երեկոյթին մասնակցում էին կայսերական թատրոնների արտիստները։

Ժողովրդական տանը հոծ թւով բանւորների առաջ Ստախովիչը մեծ աջողութեամբ կարդաց զեկուցում «Լեվ Տօլստոյի մեծ ուղիների էտապները»։

Բուխարեստ.—Պլաինէշտում կայացաւ Սուվորովի արձանի բացումը։ Սէրատի 9-րդ գունդը տուեց զինւորական պատիւներ։ Նուագախումբը նուագեց ռուսական և ռումինական օրհներգները։ Ներկայ էին ռուսաց դեսպան Շեբէկօն միսսիայի հետ, ռուսաց զինւորական պատգամաւորութիւնը՝ գլուխ ունենալով գեներալ Ռոմանէնկօյին, աւստրո-ունգարական զինւորական կցորդ Խրօնիլօվիչ, ռումինական գեներալներ, օֆիցէրներ, իշխանութիւններ և հասարակական ներկայացուցիչներ։ Պատարագից յետոյ արձանի ծածկոյթն ընկաւ։ Եպիսկոպոսը խօսեց։ Գեներալ Ռոմանէնկօն, տալով արձանի կառուցման պատմութիւնը, յայտարարեց. «Թագաւոր Կայսրի անունից բանում եմ արձանը»։ Դրվեցին մի շարք պսակներ։ Ապա տեղի ունեցաւ զօրահանդէս։

Զինւորական մինիստրը ի պատիւ ռուսաց պատգամաւորութեան ճաշ տուեց, ուր և խօսեց ճառ, գովաբանելով Սուվորովին։

Երէկ պատգամաւորութիւնը թէյ խմեց գահաժառանգի մօտ։

Կայարանում ռուս օֆիցէրների մեկնելու ժամանակ երաժշտախումբը նուագեց ռուսական ու ռումինական օրհներգները։ Գնացքը շարժվեց «կեցցէ Ռուսաստանը, կեցցէ ռուսաց զօրքը» բացականչութիւններով։

Թագաւորը գիմեց պաշտօնական նախաճաշին ռուս օֆիցէրներին մի ճառով, որի վերջում ի պատիւ Նոցին Մեծութիւնների ուրա բացագանչեց։ Թագաւորը շքանշաններ պարգևեց ռուս պատգամաւորութեան անդամներին։

Բեռլին.—Քաղաքական շրջանները ընդգծում են կայսրի դէպի Կոկովցեվը ցոյց տուած առանձին ողորմած ուշադրութիւնը։ Մատնանշվում է նաև այն հանգամանքը, որ Կոկովցեվը կայսրից ընդունվեց ապաշխարութեան օրը, երբ սովորաբար ոչ ոք չէ ընդունվում։

Ժամը 8 ու 17 ր. ստատս-սեկրէտար Կոկովցեվը կնոջ հետ մեկնեց Բեռլինից։ Կայարանում ժողովվեցին հրաժեշտ տալու պետական կանցլէրը, արտաքին գործերի մինիստրի օգնական Ցիմմէրմանը, դեսպան Սվերբէեվը՝ դեսպանատան պաշտօնեաների հետ։ Պետական կանցլէրը տիկին Կոկովցեվային մատուցեց ծաղկեփունջ։ Պրուսական երկաթուղային վարչութիւնը Կոկովցեվի տրամադրութեան տակ է դրել սալօն-վագօն մինչև սահմանը։ Մինիստրների խորհրդի նախագահին ուղեկցում են Դաւիդովը և Դօրլիակը։

Վիեննա.—«Նէյէս-Վինէր-Տագէբլ.» գրում է. «Ստատս-սեկրէտար Կոկովցեվի հաշտարար տոնը և Աւստրո-Ունգարիայի վերաբերմամբ Բեռլինում նրա արած յայտարարութիւնների բարեկամական տրամադրութիւնը այստեղ թողին գերազանց տպաւորութիւն։ Կոկովցեվի այն կարծիքի առիթով, թէ մեծ պետութիւնների հաւաքական քայլը աւելի նախադասելի կը լինէր, քան աւստրիական ուլտիմատումը Սերբիայի հասցէին, կարելի է նկատել, որ հէնց այդ հանգամանքը, այսինքն Սերբիայի գործողութիւնները մեծ պետութիւններից պարսաւելը, միապետութեանը իրաւունք տուեց արտայայտել իր հանդէս գալով ամբողջ Եւրոպայի կամքը. Աւստրիայի արագ գործողութիւններով բաւական էին կրճատուեց ընդհանուր ջղային դրութեան ընթացքը»։

Վիեննա.—Ունգարական պատգամաւորութեան զինւորական մասնաժողովում զինւորական մինիստրը ասաց, որ բալկանեան պատերազմի ժամանակ զինւորական մինիստրութեան ձեռք առած բոլոր գործողութիւնները կատարվեցին օրինակելի կերպով։ Մինիստրը ջերմ շնորհակալութիւն յայտնեց ազգաբնակութեանը և միապետութեան երկու կէսերի կառավարութիւններին։ Մինիստրը ընդգծեց, որ վերջերս մեծ պետութիւնները, նաև բալկանեան պետութիւնները ձգտում են աւելացնելու իրանց ռազմի ոյժերը, հետևաբար Աւստրո-Ունգարիան էլ պարտաւոր է աւելացնել իր ռազմի պէտքերի գումարայատկացումները։

Վիեննա.—Մամուլը Բերխտօլդի ճառի առիթով ընդգծում է աւստրո-ունգարական դիպլոմատիայի մեծ աջողութիւնը Ալբանիայի նկատմամբ։

Բուդապեշտ.—Կառավարութեանը մօտիկ լրագիրները մեծ մասամբ սառն են խօսում Բերխտօլդի ճառի մասին։ Օպպօզիցիօն մամուլը ճառը ենթարկում է խիստ քննադատութեան։

Սօֆիա.—Բօլգարական հեռ. գործակալութիւնը լիազօրված է յայտնելու, որ Բօլգարիայի և Աւստրո-Ունգարիայի միջև ոչ մի զինւորական պայմանագիր չէ կապվել։

Բուդապեշտ.—Բօլգարական մինիստր Գէննադիևը ընդունվեց Կօբուրգի պալատում Ֆերդինանդ արքայից։

Գէննադիևը ասում է, որ Բօլգարիայում հակադինաստիական շարժում գոյութիւն չունի։ Յարաբերութիւնները Ռուսաստանի հետ այժմ աւելի որոշակի են։ Աւստրո-Ունգարիայի վերաբերութեամբ մինիստրը յայտնում է. «Մենք գիտենք՝ թէ ինչպիսի բարեկամ ունենք յանձին Աւստրո-Ունգարիայի»։

Բելգրադ.—Սերբիական զօրքերը հեռացան բոլոր այն տեղերից, որոնք ըստ հաշտութեան պայմանագրի անցնում են Չերնոգորիային։ Այդ տեղերը գրաւված են այժմ չերնոգորական զօրքերով.

Հռոմ.—Ստեֆանիի գործակալութիւնը յայտնում է, որ ռուսաց լրագիրներից մինի այն տեղեկութիւնը, թէ իբր Իտալիան տալիս է Թիւրքիային փոխառութիւն Ռոդոս և Ստամպալի կղզիները գրաւելու դիտաւորութեամբ, բոլորովին անհիմն է։

Լոնդոն.—Լարկինի առաջին հանդէս գալը Ալբերտհօլլում առիթ տուեց անկարգութիւնների։ Ուսանողների մեծ խմբեր, կամենալով խափանել այն միտինգը, որ կայացած էր ընդհանուր գործադուլի պրոպագանդա մղելու համար, [illegible] 10,000 բանւոր, վերջիններս [illegible] նրանց։ Երկարատեւ [illegible], որի ժամանակ [illegible] տեղի [illegible] ներ [illegible] ները [illegible] ջացաւ [illegible] նպատա[illegible] գործա[illegible] յացաւ։

Տօկիօ.—«Իզզիմօ» ռազմանաւը մեկնեց Մէկսիկա։

Մամուլը մեծ տեղ է տալիս Մէկսիկայում ճապոնական [illegible] և համեմատում [illegible] զօրքերը [illegible] որ մէ[illegible] գերազ[illegible]։

Բարցելոնա.—Անգլիական երկու ռազմանաւ ուղևորուեցին դէպի Մէքսիկական ջրեր։

ԹՈՒՐՔԱՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

I

Էրզրում, 21 նոյմ.

Այսօր առաւ. Զաւէն նորընտիր պատրիարքը մեկնեց մեր քաղաքից դէպի Կ. Պոլիս։ Ժողովրդի խուռն բազմութիւնը լցրել էր նորից փողոցները. բազմաթիւ ձիաւորներ և կառքեր ուղեկցեցին նրան մինչև քաղաքից 3 ժամ հեռու գտնւող Իլիճա գիւղը։ Քաղաքի դրան մօտ եկել էին հայ և թիւրք դպրոցների աշակերտները, թիւրք արհեստաւորական վարժարանի սաները՝ իրանց փանփառի նուագախմբով, մի ջոկատ զինւորներ և այլն։ Նահանգապետ Րէշադ-բէյը բարի ճանապարհ մաղթելու համար եկել էր քաղաքից դուրս՝ մօտ 1½ ժամվայ ճանապարհ։ Քաղաքային և զինւորական պաշտօնեաներ ուղեկցեցին պատրիարքին մինչև Իլիճա գիւղը։

Իլիճա գիւղում Էրզրումի քաղաքապետութիւնը տուեց փառաւոր ճաշ երկրագործական վարժարանում։ Էրզրումից դուրս պատրիարքի առաջին օթևանը եղաւ Աշկալա գիւղը. այնտեղ ևս Էրզրումի քաղաքապետութիւնը ամեն ինչ հոգացել էր նորընտիր պատրիարքի հանգստութեան համար։ Դարձեալ քաղաքապետութեան կողմից տրւեց ընթրիք։

Այս բոլոր պատիւները, որոնք ընծայվեցին նորընտիր պատրիարքին կառավարութեան, քաղաքապետութեան և առհասարակ թիւրքերի կողմից, համաձայն են այն խիստ հրահանգների, որ արել է կենտրոնի կառավարութիւնը ներքին գործերի մինիստրի միջոցով գաւառական իշխանութիւններին։

Ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյը շատ լաւ է իմանում հայերի գլխի տակ կակուղ բարձ դնելու ձևը։ Կը կարողանա՞յ այսպիսի հրահանգված պատիւների, հացկերոյթների, փառաւոր ընդունելութիւնների միջոցով որսալ նորընտիր պատրիարքի լռութիւնը Թիւրքահայաստանում տիրող աւերիչ րէժիմի նկատմամբ։ Չենք կարծում։

⁂

Կառավարութեան կողմից հայոց պատրիարքին ընծայված այս պատիւների, ընդունելութիւնների առիթով թիւրք ժողովրդի, նոյն իսկ նրա գիտակից կարծւած «ինտելիգենտ» և զինւորական շրջանների մէջ ծայր են տուել տրտունջներ։

Նրանք առարկում են, որ արդէն չափը անցնում է հայերին սիրաշահելու համար սարքված այս ցոյցերին ու համակրանքի ժէստերին։ Ըստ այդ շրջանակների կարծիքին, չարժէ մի գեավուրի ընծայել այսքան պատիւ, թէկուզ այդ գեավուրը լինի պատրիարք։ Մեր կառավարութեանը չէ վայելում,—ասում են,—այսքան քծնել, ստորանալ և այլն։

Տեղական «Ալ-Բայրակ» թիւրք թերթը յորդորներ է կարդում յանուն «սահմանադրական հաւասարութիւնների» չը վշտացնել էրմէնի հայրենակիցներին. «Ի՞նչ անենք, —գրում է թերթը,—երբ սահմանադրութիւնը ընդունել ենք, պէտք է որ մենք մեզ քաղաքակիրթ ազգերի շարքը հաշւենք, և որպէս քաղաքակիրթ ազգ՝ պարտաւոր ենք յարգել մեր հայրենակից միւս ազգերին ևս»։

Ինչպէս տեսնում էք, թիւրք սահմանադրական կուսակցութեան՝ «Իթթիհադի» օրգան թերթը ևս օձի լեզւով է խօսում. նրա գրածից այն եզրակացութիւնն է դուրս գալիս, որ ուզեն-չուզեն, քանի որ մի անգամ ջուրը մտել են, պէտք է էշն էլ ետևից քարշ տան. ուրիշ խօսքով՝ սահմանադրութիւնը թիւրքերի համար բերել է լաւ բաներ էլ, վատ բաներ էլ. վատ բաներից է՝ օրինակ՝ հայերի վայելած հաւասարութիւնը օրէնքի առաջ. բայց ի՞նչ արած, խեղճ թիւրքերը ստիպված են տանել այդ տանջանքը. երևի մտածում են, որ վարդը առանց փշի չէ լինում։

Խե՛ղճ թիւրքեր։ Կ.

II

Բաբերդ, 24 նոյմ.

Երէկ նորընտիր պատրիարք Զաւէն արքեպիսկոպոս Էրզրումէն տեղս ժամանեց։

Գիշերը մնացած էր ճամբուն վրայ գտնուող հայկական Աւերակ գիւղը։ Բոլոր գիւղացիները եկած էին ճամբուն վրայ և խնդրած՝ որ իրենց հիւր ըլլայ։

Երէկ դեռ առաւօտէն Բաբերդի հայ և թիւրք ժողովուրդը թափուած էր ճամբուն վրայ և անհամբեր կը սպասէր սրբազան հիւրին։ Հարիւրաւոր ձիաւորներ և բազմաթիւ կառքեր ընդառաջ գացած էին 3—4 ժամուան ճամբայ։ Դիմաւորող հայերուն հետ կային նաև կառավարութեան պետ կայմակամ Նէջիբ-Նէդիմ-բէյը, քաղաքապետութեան անդամները, թիւրք վաճառական դասակարգը և այլն։ Շրջակայ բոլոր հայ գիւղերէն եկած են շատ գիւղացիներ հեծեալ և հետիոտն։ Քաղաքապետութիւնը, ի պատիւ հայոց նորընտիր պատրիարքին, հացկերոյթ տուաւ։ Թիւրքերը ինքնաբերաբար չէ որ այս պատիւները կընծայեն, այլ այդպէս հրահանգուած է Կ. Պոլսոյ կառավարութենէն։ Ինչ որ ալ ըլլայ, նորընտիր պատրիարքի բարեպատեհ այցելութիւնը օգտակար եղաւ հայերուս, որոշ չափով հայոցս վարկը բարձրացաւ թիւրքերու աչքին։ Թէ քաղաքի հայ ժողովուրդը և թէ շրջակայ գիւղերը մատուցին սրբազան պատրիարքին բազմաթիւ հանրագրութիւններ, բողոքներ թիւրքերու կողմէն իրենց կրած զրկանքներու և թշնամութիւններու մասին։ Մալաթա գիւղի թիւրքերն ևս, միացած՝ հայերուն հետ, եկան պատրիարքին բողոքելու շրջակայ թիւրք աղաներու կողմէն գործ դրուած բռնութիւններուն դէմ։ Պատրիարքը ամենքի բողոքները, ցաւերը շալկած կերթայ Պոլիս։

Հայոց առաջնորդարանը ի պատիւ հիւրին՝ «դրօշակազարդուած է և լուսավառուած»։ Նայելով այդ խեղճ ու կրակ քրքրուած քանի մը դրօշակներուն և սևցած, կոտրտուած լապտերներուն՝ ակամայ կը յիշեմ հայ ժողովրդի այժմեան խղճալի վիճակը Բաբերդի շրջանին մէջ։ Այս շրջանը դեռ 19-րդ դարու սկզբին ունէր հոծ հայութիւն, բազմաթիւ հայկական շէն գիւղեր, հայութիւնը ճնշող մեծամասնութիւն էր։

Իսկ հիմա՞. քաղաքի մէջ հազիւ հազ 300 տնւոր հայութիւն 4000 տուն թիւրքութեան դէմ։ Հայերը տնտեսապէս և բարոյապէս բոլորովին ենթարկուած թիւրքութեան, ընտանեկան բարքերը խիստ այլասերուած, մանաւանդ կոտորածներէն վերջ, երբ հայերը կորսնցուցին ամեն ինչ և դարձան ծառայ ու գործակատար թիւրքերուն։

Շրջակայքը 28 զուտ և թիւրքախառն հայ գիւղեր՝ 150 բոլորովին թիւրքաբնակ գիւղերու դիմաց և անոնցմով շրջապատուած։

Այսօրուան՝ հայութիւնը Բաբերդի շրջանին մէջ՝ դեռ 100 տարի առաջուան խիտ ու կուռ հայութեան ցանցառ փշրանքներն է, խլխլեակները միայն։ Առաջնորդարանի դուռը «զարդարող» հին, կոտրտուած լապտերները և կեղտոտ, պատառոտուած քանի մը դրօշակները ճշգրիտ խորհրդանիշն են Բաբերդի հարստահարուած, սմքած հայութեան այսօրուան տխուր վիճակին։

Գաղթականութիւնը 1828-էն ի վեր կերաւ, լափեց Բաբերդի հայ ժողովրդեան արմատները. ամբողջ շրջաններ, քանի-քանի տասնեակ գիւղեր հայերու զանգուածային գաղթականութեան պատճառով մնացին անտէր, անտիրական. թիւրքերը եկան, առանց նոյն իսկ փոքրիկ վարձատրութեան գրաւեցին արտերը, ընդարձակ հողերը և նստան։ Կուշտ հացը նպաստեց անոնց բազմանալուն։ Քանի-քանի հայ գիւղեր ինկան իսլամութեան գիրկը և կորսուեցան հայութեան շարքէն։

Նորընտիր պատրիարքը կը տեսնէ, կը քննէ և կը հասկնայ մեր կորուստի պատճառները։ Բայց ճար-դարման կրնա՞յ ընել թէ ոչ։

Բաբերդի վերև, լեռան վրայ թառած «հայոց Պապ թագաւորի» հին բերդն ալ տեսած է այսքան տարուան մեր քաղաքը, անիկա ալ կը նայի, կը նայի և դարձեալ լուռ կը մնայ իր աւերակներուն մէջ ծրարուած, սոսկ Ճորոխ գետին յանձնարարելով ընդունիլ մեր դառն արցունքները և տանիլ հեռու, հեռու... Տեղացի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Պարիզից հեռագրում են.

«Միջերկրական ծովի գերմանական նաւատորմի հրամանատարը, որ յոյն-թիւրքական բանակցութիւնների լարված դրութեան րոպէին գերմանական գործակալներից տեղեկութիւն ստացաւ, թէ յունաց մի շոգենաւ զէնքով ու ռազմամթերքով մեկնել է Կիլիկիա՝ հայերին բաժանելու համար, գնաց այնտեղ, որպէսզի արգելք լինի դրան։ Հայերը, ենթարկվելով իրանց հոգևոր իշխանութիւնների նախազգուշացման և առհասարակ չը մտածելով ներկայումս ապստամբութեան մասին, չեկան զէնքն ընդունելու համար։ Շոգենաւը մօտեցաւ Մերսինի մօտ ծովափին, բայց, չը տեսնելով հայերի, հեռացաւ։

«Սակայն թիւրքերը՝ յայտնի չէ ի՛նչպէս՝ իմացել էին շոգենաւի գալստեան նպատակի մասին։ Սկսվեց յուզմունք քրիստոնեաների դէմ, երկիւղ ծնվեց, թէ մի գուցէ Ադանայի գազանութիւնները կրկնվեն։ Գերմանական ծովակալը անկարող եղաւ կանգնեցնել կասկածելի շոգենաւը, բայց, տեղեկանալով թիւրքերի գրգռման մասին, մօտեցաւ Ադանային և, այցելելով վալիին, յայտնեց, թէ հայերին սպանելու դէպքում գերմանական ռազմանաւերը կը ռմբակոծեն Ադանան և որ Գերմանիան կը դադարէ պաշտպանել թիւրքերին Ռուսաստանի ծրագիրներից։

«Վալին և նրա պաշտօնեաները շտապեցին միջոցներ ձեռք առնել անկարգութիւնների առաջն առնելու համար։

«Գերմանիայի այդ առաջին քայլն ի պաշտպանութիւն քրիստոնեաների ունի մեծ նշանակութիւն և ցոյց է տալիս, թէ ինչպիսի՛ գործնական նպատակների է ծառայում Միջերկրական ծովի նոր ռազմի նաւատորմը, նաև թէ՝ Գերմանիան ո՛ր աստիճան ընդունում է Թիւրքիան իր ազդեցութեան ներքոյ։ Այդ քայլը նոյնպէս ապացոյց է, որ Գերմանիան վերցնում է հայերին իր հովանաւորութեան տակ, աշխատելով համոզել նրանց՝ թէ Գերմանիան գործում է աւելի եռանդով, քան Ռուսաստանը։

«Համաձայն յունական տեղեկութիւնների, զէնք տարած նաւը պատկանում է մասնաւոր անձի և Մերսինի մօտ նրա երևալը քաղաքական նշանակութիւն չունի։

«Չէ կարելի չողջունել հայերի չափաւորութիւնը, որոնք կարող եղան խուսափել խաբուսիկ արկածներից և պատրաստ են սպասելու Եւրոպայի խոստացած բարենորոգումներին։ Մեծ պետութիւնները պէտք է, սակայն, յիշեն, որ պէտք է փութացնել բարենորոգումները, որովհետև հայերի դժուարին կացութիւնը կարող է յուսահատեցնել նրանց և դրդել այնպիսի մի քայլի, որից Գերմանիան կարող է միայն շահել»։ («Н. Вр.»)

—

Ժընևից հեռագրում են. «Նոյեմբերի վերջին Բերնում մտադրութիւն կայ գումարել հայասէրների կոնգրէսը։ Զեկուցանող լինելու է Պօղոս Նուպար փաշան։ Կոնգրէսը զբաղվելու է այն դիմումի մշակութեամբ, որ ուղղվելու է մեծ պետութիւններին Հայաստանի բարենորոգումների մասին»։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

—

Կ. Պոլիս, 25 նոյմ.

Հայկական խնդիրը նոր շրջանի մը մէջ մտաւ։ Կը հաստատուի հետզհետէ աս լուրը, թէ երրեակ զինակցութեան կողմէ Գերմանիա և երրեակ համաձայնութեան կողմէ Ռուսիա՝ համաձայնութեամբ պատրաստած են բարենորոգմանց ծրագիր մը, որուն համաձայն եւրոպական հակակշռի հաստատութիւնը անհրաժեշտ կը դատուի վեց նահանգներուն մէջ, որոնք ըստ գերմանական ծրագրին երկու շրջանակի պիտի բաժնուին։

Այս ծրագիրը Բ. Դրան ներկայացուած է, սակայն երիտ.-թիւրքերը զայն նկատելով երկրին անկախութեան հակառակ՝ մերժած են ոևէ հակակշիռ ընդունիլ և կը յայտնեն, թէ իրենք առանց Եւրոպայի իսկ պահանջման որոշած են անվրէպ գործադրել բարենորոգումները։

Բ. Դուռը հակակշիռ չընդունելու համար ամեն բան ընելու պատրաստ կը թուի։ Ռուսիոյ հետ տակաւին բանակցութիւնները չվերջացած, տեսնելով որ ռուսական պահանջմանց մէկ գլխաւոր հիմն ալ կը կազմէ բարենորոգմանց խնդիրը, Ջավիդ բէյ ընդհատելով ռուս դեսպանին հետ սկսած բանակցութիւնները՝ փութաց Բերլին, շահելու համար Գերմանիան։

Թիւրքերը կը մտածեն թէ՝ եթէ Գերմանիա Ռուսիոյ հետ համակամ ու համամիտ ըլլալէ դադրի, արդէն բարենորոգմանց համար յանուն Եւրոպայի եղած ռուս և գերման պահանջումը իր ոյժը կը կորսնցնէ, և ինչպէս Լոնդոնի դաշնագրին Եդիրնէի մասին դրուած որոշումը անգործադրելի մնաց, նոյնպէս նաև այս որոշումը կը մնայ անգործադրելի ու մեռեալ տառ։

Ասով հանդերձ՝ կերևայ թէ Բ. Դուռը աւելի քան երբէք մտահոգուած է նեղ դրութեան, և Եւրոպայի այս պահանջումը շատ խորունկ կերպով ազդած է իրենց վրայ։

Այս հոգեբանական վիճակը կը յայտնուի թիւրք մամուլին հրատարակութիւններէն, որոնք եւրոպական հակակշռին դէմ կը խօսին իրենց լեզուին բոլոր կորովովն ու ուժովը, միևնոյն ատեն հայերը սիրաշահելու ամեն փորձ ընելով։

Միւս կողմէն այս միջոցիս կառավարութիւնը ամեն ճիգ ու ջանք կը թափէ Հայաստանի մէջ ոևէ խռովութեան, ջարդի և սպանութեան տեղի չտալու համար, և անկարելի հռչակած ձերբակալութիւնը աւազակներու՝ անհաւատալի արագութեամբ մը կը շարունակուի։

Այսօր իսկ հրատարակուեցաւ նոր որոշում մը, որով 13,000 վարժ ձիաւորներ բանակէն առնուելով Հայաստան պիտի ղրկուին, ոստիկան-զինուորներու հրամանատարութեան տրամադրութեան տակ դրուելու և անոնց միջոցաւ մի անգամ ընդմիշտ Հայաստանի մէջ աւազակութիւնը բնաջինջ ընելու համար։

Բարենորոգումները այս կերպով գործադրութեան դրած ըլլալուն ապացոյցը տալ կուզէ Թիւրքիա։

Սակայն՝ ինչպէս երիտասարդ-թիւրք թերթերու գրածներէն կը հասկցուի, Բ. Դուռը կը խորհի իր տրամադրութեան տակ ունենալ եւրոպացի պաշտօնատարներ՝ օսմանեան ծառայութեան մէջ առնուած, ասով աւելի մեծ վստահութիւն ներշնչելու համար Եւրոպայի։ Հոս ևս անելի մը առջև կը գտնուի, վասնզի Անգլիա, որուն մասնաւորապէս դիմած են պաշտօնատարներ ուզելու համար, բացէ ի բաց մերժած է։ Ճիշդ այս բանին համար է, որ մասամբ բարկութիւն ժայթքող գրութիւններ կերևան Անգլիոյ դէմ, որ իբր թէ՝ այս կերպով՝ իր տարիներէ ի վեր թելադրած բարենորոգմանց գործադրութեան արգելք կը հանդիսանայ։

Նոյնքան բուռն թշնամական տրամադրութեամբ լեցուած են նաև Ֆրանսայի դէմ, որ իր բոլոր առկախ խնդիրները կարգադրելէ յետոյ՝ ալ հիմա փոխառութիւն մը ընելու համար պայման կը դնէ նախ խաղաղութեան կնքում Յունաստանի, Սերբիոյ և Չերնոգորիոյ հետ ևս, ինչպէս նաև կարգադրութիւն Ռուսիոյ հետ առկախ մնացած խնդրոյ, որոնցմով անուղղակի կերպով շահագրգռուած է Ֆրանսա, քանի որ անոր տըրուած կարգ մը երկաթուղիի գիծերու շինութեան համար Ռուսիոյ հաւանութիւնը անհրաժեշտ է՝ 1900-ի պայմանագրութեան համաձայն։

Այս պայմաններուն մէջ՝ հայկական խնդրոյն լուծման բանալին այս միջոցիս Բերլին փոխադրուած է, և հոն՝ Ջավիդ-բէյի և գերման կառավարութեան միջև կատարուած բանակցութիւններէն կախում ունի։

Եթէ Գերմանիոյ տրուած բացարձակ իրաւունքներէն շլացած՝ Գերմանիա լքանէ արդարութեան և մարդասիրութեան ամեն սկզբունք, այդ ատեն աստիճան մը վտանգուած կրնայ համարուիլ հայոց դատը, վասնզի Եւրոպայի համախումբ և համակամ տրամադրութեանց վրայ երբէք յոյս դնել կարելի չէ։

Եւ արդէն եւրոպական կառավարութիւններն ալ Լոնդոնի դեսպանախորհրդին որոշմանց անգործադրելի մնալէն ազդուած՝ կարծես թէ տրամադիր չեն իրենց ընդհանուր խորհրդակցութիւնները շարունակելու, հակառակ անոր որ որոշած էին հոկտեմբերին վերստին գումարուիլ։

Ասիկա կը հաստատէ, թէ արդէն որքան տարակուսելի և որքան անվստահելի բան մըն է Եւրոպայի համերաշխութիւնը։

Ամեն պարագայի մէջ Բ. Դուռը այսօր կը գտնուի դժուարին դիրքի մը մէջ, ինչպէս նաև Ռուսիա, որ նախաձեռնութիւն առանձնելէ յետոյ հայկական խնդրոյն կարգադրութեան մէջ՝ բարոյական պարտութեան մը պիտի մատնուի, եթէ իր հեղինակաւոր ձայնը լսելի ընել չտայ Բ. Դրան։

Անշուշտ մենք հայերս անձկութեամբ կը հետևինք այս բոլոր իրերադարձութեանց, հաստատ գիտնալով արդէն թիւրքերու հոգեբանական վիճակը, որոնք ծանր վտանգին առաջև կը խոնարհին՝ յետոյ դարձեալ իրենց գիտցածը ընելու համար։

Հայաստանի մէջ Միր-Մհէններու և Շաքիրներու և ասոնց պէս հազարներու սպանութիւնը ժամանակաւոր սփոփանք մը միայն կը պատճառէ մեզի, վասնզի գիտենք, թէ այս ճնշող մթնոլորտը պայծառանալէն յետոյ՝ օսմ. կառավարութիւնը պիտի գտնէ միջոցը՝ ստեղծելու նոր Շաքիրներ, նոր Միր-Մհէններ և նոր Սայիդներ, պատրաստ՝ ջարդելու հայերը, թերևս աւելի սաստկութեամբ։

Ասկէ զատ՝ այս յեղյեղուկ, մէկ օրէն միւսը անակնկալներով լեցուն երկրին մէջ ո՞վ կապահովէ, թէ արդի կառավարութիւնը իշխանութեան վրայ պիտի մնայ։

Արդէն հազիւ պատերազմը վերջացած, սկսած է կուսակցական պայքարի շշուկներ շրջիլ։

Կըսուի թէ՝ բանակատեղերէն Կ. Պոլիս եկած օֆիցէրները գումարում մը ունենալով՝ մի քանի նշանաւոր օֆիցէրներ փոխանորդ կարգած են, որոնք վարչապետին ներկայանալով պահանջած են, որ ընտրութեանց առթիւ խառն դահլիճ մը կազմուի և ընդդիմադիրներ ալ առնուին դահլիճին մէջ։

Սակայն առաջարկը նկատի չէ առնուած։ Կրնայ ըլլալ, որ օֆիցէրներն իրենց պահանջը բռնի գործադրել տան, և այն ատեն կրնանք երևակայել թէ հայկական բարենորոգումները ի՛նչ ձև կը ստանան։ Հայորդի

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ

(«Н. Вр.»-ի առաջնորդող յօդուածը՝ նոյմ. 30-ին)

—

Անգլիական մինիստր-նախագահը նոյմ. 29-ին հանդէս եկաւ Գիլդհօլում մի մեծ ճառով, շօշափելով՝ համաձայն արմատացած դարաւոր սովորութեան՝ արտաքին հարցերը, այսինքն բալկանեան պատերազմը, մեքսիկական գործերը, հայկական բարենորոգումները։ Առաջին երկու կէտերի վերաբերութեամբ Ասկվիտը ոչինչ նոր բան չասաց։ Բայց մեծ հետաքրքրութեամբ մենք ծանօթացանք ճառի միջին մասի հետ, որ վերաբերում է հայկական բարենորոգումներին. այդ հարցի առիթով Ասկվիտը որոշեց այն թէզիսները, որոնք մինչև օրս այնքան էլ պարզված չէին։

Այդ թէզիսների էութիւնը կայանում է հետևեալում. Մեծ-Բրիտանիան ողջունեց այն փաստը, որ վերջին պատերազմը չը շօշափեց թիւրքաց կառավարութեան շահերը Փոքր-Ասիայում։ Մասնաւորապէս, թիւրքաց գերիշխանութիւնը Բ. Դրան ասիական երկիրներում մնաց անսասան։ Բրիտանական կառավարութիւնը ամեն կերպ կը պաշտպանէ այդ գերիշխանութիւնը. նա կարծում է, որ ներկայումս գոյութիւն ունեցող քաղաքական status quo-ի լաւագոյն երաշխիքը կը հանդիսանան ներքին լայն բարենորոգումները. այդ բարենորոգումները «չեն կարող գործադրվել առանց մեծ պետութիւնների աջակցութեան». մեծ-բրիտանական կառավարութիւնը ուրախ կը լինի ցոյց տալ Թիւրքիային օգնութիւն, որի մասին նա խնդրում է. «սակայն նրա աչքից չեն վրիպի միւս մեծ պետութիւնների շահերը», և հետևաբար չի հրաժարվի այդ վերջիններից հայկական պրոբլէմի քննութեան ժամանակ։

Մենք բերինք Ասկվիտի ճառը համապատասխան այն շատ կրճատ ցուցումների, որոնք պարունակվում էին երեկվայ գործակալական հեռագրի մէջ։ Որպէսզի այսպէս ասած բացայայտ լինի վերոյիշեալ թէզիսների—առաջին հայեացքից—այն անհասկանալի նշանակութիւնը, պէտք է ի նկատի ունենալ հետևեալ տուեալները։

Այս տարւայ յունվարին Մահմուդ-Շէվքէթ-փաշան դիմեց Մեծ-Բրիտանիային առաջարկելով աջակցութիւն ցոյց տալ հայկական բարենորոգումները գործադրելու ժամանակ։ Պաշտօնական առիթ այդօրինակ քայլի համար այսպէս կոչված 1878 թ. Կիպրոսի պայմանագիրն էր. ինչպէս յայտնի է, այդ պայմանագիրը իրանից ներկայացնում էր պաշտպանողական թիւրք-անգլիական դաշնակցութիւն, որ նպատակ ունէր «ապահովել նորին մեծութիւն սուլթանի տիրապետութիւնների անձեռնմխելիութիւնը Ասիայում»։ Պայմանագրի իմաստը պարզվում է պայմանագրի 1-ին յօդուածից, որի մէջ ասված է, թէ Մեծ-Բրիտանիան միանում է սուլթանի հետ նրա համար, որպէսզի դիմադրէ Ռուսաստանին զէնքի ոյժով այն դէպքում, եթէ այս վերջին պետութիւնը յայտնէ որևէ նոր պահանջ Փոքր-Ասիայի երկիրների վրայ, որոնք պէտք է ճանաչվեն Թիւրքիայի սեփականութիւն՝ համաձայն Բերլինի դաշնագրութեան։ Փոխարէնը այդ պաշտպանողական դաշնակցութեան համար նորին մեծութիւն սուլթանը «խոստանում էր Մեծ-Բրիտանիային մտցնել անհրաժեշտ բարենորոգումներ (միացած պետութիւնների հետ համաձայնութեան գալով) Փոքր-Ասիայի քրիստոնեաների կառավարութեան գործում», այսինքն հայերի։ Այդպիսով Մահմուդ-Շէվքէթ-փաշան, յենվելով Կիպրոսի պայմանագրի վրայ, աներկդիմի կերպով ցանկութիւն արտայայտեց Ռուսաստանի դէմ հանել Անգլիային. նա չէր կարող չը գիտենալ, որ 1878 թ. յունիսին երկու պետութիւնների յարաբերութիւնները վերին աստիճանի լարված էին. նա պէտք է հասկանար, որ սոսկ յիշատակումը Կիպրոսի պայմանագրի մասին՝ ըստ անհրաժեշտութեան սառնութիւն կը մտցնէր ռուս-անգլիական յարաբերութիւնների մէջ։ Վերջապէս թիւրքաց առաջարկութիւնը յանգեց այն բանին, որպէսզի անգլիացիք նշանակեն հայկական վիլէթներում երկու գեներալ-տեսուչների և բաւական պաշտօնեաներ՝ տեղական ժանդարմերիան վերակազմելու համար։

Անգլիական կառավարութիւնը երկար ժամանակ տատանվում էր։ Մի կողմից նրա առաջ բացվում էին շատ լայն հեռանկարներ երկու գեներալ-նահանգապետների միջոցով անգլիական ազդեցութիւնը ամրապնդելու մտքով մի այնպիսի շրջանում, որ շփվում է միջազգային յարաբերութիւնների տեսակէտից վտանգաւոր ռուսական ազդեցութեան հետ Հայաստանում և գերմանականի հետ՝ Անատոլիայում։ Բայց միւս կողմից Foreign Office-ը անպայման տեղեակ էր այն անհաճելի տպաւորութեան հետ, որ կը գործէ Պետերբուրգում Անգլիայի ինքնագլուխ քայլը թիւրքաց պետութեան այնպիսի մասում, որի վերաբերութեամբ Բերլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածը ապահովում է բոլոր մեծ պետութիւնների հաւաքական հսկողութիւնը, ի թիւս որոց նաև Ռուսաստանի։ Եթէ չենք սխալվում, վերոյիշեալ տենդենցիաներից առաջինը որոշ չափով յաղթանակեց մօտաւորապէս այս տարւայ յունիսի վերջերին, որովհետև այդ ժամանակ սըր Էդուարդ Գրէյը համաձայնեց «սկզբունքով»՝ նշանակել երկու գեներալ-նահանգապետների Հայաստանում և մի գեներալ-նահանգապետի՝ թիւրքաց ներքին գործերի մինիստրութեան մէջ։ Թէ ինչպէս էին զարգանում յետագայ դէպքերը, այդ մասին ճշգրիտն մամուլի մէջ ոչինչ յայտնի չէ մինչև օրս։ Յամենայն դէպս սըր Էդուարդ Գրէյի «սկզբունքային» համաձայնութեանը չը հետևեցին այն անձանց անունները, որոնց և պէտք է յանձնվէին թիւրքաց կառավարութեան առաջարկած պաշտօնները։ Այն ժամանակ թիւրքաց կառավարութիւնը դիմեց ծայրայեղ միջոցի։ Այս տարւայ աշնանը նա դիմեց Լոնդոն այսպիսի առաջարկութեամբ. տեսականապէս Foreign Office-ը համաձայն է. գործնականապէս պաշտօնեաները յականէ անուանէ չեն մատնանշված, և ահա ինքը Բ. Դուռը ցոյց է տալիս այն անգլիացի պաշտօնեաներին, որոնք, նրա կարծիքով, կարող կը լինէին լաւագոյն կերպով կատարել գեներալ-տեսուչների պարտականութիւնները։ Որքան մեզ յայտնի է, այդ թեկնածուներից մինն էլ պ. Գրէվսն էր, որ ներկայումս զբաղվում է թիւրքաց ֆինանսների բարենորոգման հարցով և երկար ժամանակ եղել է անգլիական հիւպատոս հէնց հայկական նահանգներում։ Պ. Գրէվսը իր կողմից յայտնեց լիակատար համաձայնութիւն, որովհետև թիւրքերը ի միջի այլոց առաջարկեցին նրան փայլուն վարձատրութիւն։ Յապաղումը միայն կենտրոնական անգլիական կառավարութիւնից թոյլտւութիւն ստանալն էր։ Երկար ժամանակ պատասխան չը ստացվեց. բայց երկու շաբաթ առաջ անգլիական հաւատարմատարը իրազեկ արաւ մեծ վեզիրին, որ բրիտանական կառավարութիւնը թոյլ չէ տալիս պ. Ռօբէրտ Գրէվսին ստանձնել հայկական գեներալ-տեսչի պարտականութիւնները։

Գործի այդ շրջմնթացքը խիստ հարուած էր Բ. Դրան համար յամենայն դէպս՝ եթէ դատենք այն ցուցումներից, որ տուեցին ղեկավար թիւրք գործիչները։ Նրանցից մեծ մասը հնարաւոր գտաւ Գրէվսի միջադէպից ստեղծել մեծ, համարեա համաշխարհայկին պրոբլէմ: Թիւրքիան մինչև այսօր օգտվում էր մի շարք իրար փոխարինող անգլիացի մինիստրների նպաստաւոր աջակցութեամբ. «Պէտք է արդեօք մենք մոռանանք, որ ներկայումս Լօնդօնում յաղթութիւն է տարել ուրիշ հոսանք, մի այնպիսին, որ անհաշտելի է և Թշնամի Բ. Դրանը». երիտասարդ-Թիւրք գործիչները անգլիացի ժուռնալիստների հետ խօսակցելիս չը քաշվեցին բերել և այն վերին աստիճանի բնորոշ «բացատրութիւնները», թէ Անգլիան չը համաձայնեց պաշտպանել Մահմուդ-Շէվքէթ-փաշայի ծրագիրը: Ասում են, որ Անգլիան համոզվել է, թէ անհրաժեշտ է Թիւրքաց պետութեան վերջին մնացորդները ոչնչացնելու ճանապարհով աշխատել, որովհետև ինքնուրոյն մահմեդական պետութեան գոյութիւնը, որի գլուխը ներկայանում է բոլոր ուղղափառների խալիֆան, իրանից ներկայացնում է մեծ դժուարութիւնների աղբիւր Հնդկաստանում, պահպանելով հնդիկ կայսրի մահմեդական հպատակների մէջ ֆանատաիկ յոյսեր՝ վերականգնելու մահմեդական պետութիւնը աւելի մեծ սահմաններում, քան էր XVII դարի վերջերին:

Մենք դիտմամբ բերինք բաւական երկար ձևով կ. Պոլսի բոլոր այդ հէքիաթները: Լուրջ նշանակութիւն նրանք, ի հարկէ, չեն կարող ունենալ. Նրանք բնորոշ են միայն նրա համար, որպէս զի ցոյց տան, թէ որ աստիճանի մեծ է երիտասարդ-Թիւրքերի քաղաքական շրջանների ջղային դրութիւնը և թէ որպիսի մեծ դժուարութեամբ հարկ եղաւ կուլ անգլիական կառավարութեանը՝ ընդունելով վերոյիշեալ վճիռը:

Մենք կարծում ենք, որ Ասկվիտի ճառը հանդիսանում է իրական ու հրապարակային վկայութիւն այն վճիռների, որոնք հաստատվեցին Լօնդօնում հէնց Կիպրոսի պայմանագիրը վերականգնելու հարցի առիթով: Այդ ակտը կնքվեց այնպիսի հանգամանքներում, որոնք ներկայումս գոյութիւն չունեն: 35 տարի առաջ նա գոյութիւն ունէր Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածին զուգընթաց և անփոփոխ մնում էր մեռած տառ: Թիւրքիան կարող էր, ի հարկէ, միամիտ յոյս տածել, թէ աշխարհ դուրս բերելով վաղուց մոռացված վաւերագիրը և հրապուրելով անգլիական կառավարութեանը երեք գեներալ-տեսուչների տեղերի պատրանքով, նա կարող կը լինի կուեցնել երբեմն համաձայնութեան պետութիւններին: Ներկայումս նրան բացորոշ յայտնված է, որ հայկական «բարենորոգումները չեն կարող գործադրվել առանց մեծ պետութիւնների աջակցութեան», որ մեծ-բրիտանական կառավարութիւնը, օգնելով Թիւրքիային, «աչքից բաց չի թողնի միւս մեծ-պետութիւնների շահերը»:

Դա միանգամայն պարզ է: Ուրիշ ոչինչ մենք չէինք էլ սպասում մեծ բրիտանական կառավարութեան բարեխղճութիւնից:

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԸ ԳԻՒՂԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ *)

Գ.

Զարթնում եմ քնից և նայում կողքս, այնտեղ, ուր սպասում եմ տեսնել անկողնի մէջ քնած Ալեքսանդր Քալանթարին:

Բայց... անկողինը դատարկ է. Թռչնիկս թռել է. թէ ե՞րբ և ու՞ր, ես ինքս չը գիտեմ:

Նայում եմ ժամացոյցիս. ժամը 5-ը դեռ ևս չը կայ: Իսկոյն հագնվում և գիւղական խրճիթից դուրս եմ գալիս:

Անման առաւօտ է: Արագածի կատարը արդէն ոսկեզօծված է վաղորդեան առաւօտի մեղմ լոյսով. այստեղից իսկ կանաչին են տալիս նրա կրծքի հիւթալից արօտները, որոնց վրա տեղ-տեղ դեռ կուտակված են արծաթէ ձեան հիւսները և, հալվելով, գնում մտնում են Արագածի կուրծքը՝ սկիզբ տալու հազարաւոր սառնորակ, անմահական, բիւրեղ աղբիւրներին...

Երկու շներ՝ խոշոր ու բրդոտ, վայրենի և կատաղի, ինձ տեսնելուն պէս, մռնչում են և հաչում:

Դուրս է գալիս տան տիրուհին, երեսին քող, բերանը ծածկած. երկու ձեռքերը դնում է կրծքին, ինձ խոնարհ գլուխ տալիս և շներին հեռու քշում:

— Ո՞ւր է իմ ընկերը,—հարցնում եմ սրան:

Սա, առանց մի բառ արտասանելու, ձեռքով գիւղի մէջն է ցոյց տալիս. ես իմանում եմ, որ Քալանթարը գիւղամէջ է գնացել:

— Ես էլ կը գնամ, հարսի՛ միայն մի տղայ կամ աղջիկ տուր, որ տանի ինձ նրանց մօտ հասցնի:

Նա գլխով է անում, մտնում տուն և, մի ութ տարեկան երեխայ առաջն արած, իմ մօտ բերում:

— Գնանք, ամի,—դառնում է ինձ սա և, առնելով ձեռքը իրանից երկու անգամ երկար մի դագանակ, առաջս ընկնում:

Ես սուս ու փուս ընկնում եմ սրա ետև և, փնտռելով այս մանուկի հովանաւորութիւնը, ծուռ ու մուռ փողոցներով առաջ եմ գնում:

Հէնց այստեղ պատահում եմ Քալանթարին՝ շրջապատված վեց-եօթ գիւղացիներով տուն գալիս:

Ուրախանում է, բարի լոյս ասում և պատմում ինձ.

— Երինջը, ճիշդ որ, շատ լաւն էր. անկասկած Լոռու պանրագործական գործարաններից է գողացված կամ բերված. արժէ ամենաքիչը 70 րուբլի, բայց Դանիէլը տըւել է միայն 14 րուբլի. եթէ երկու տարի պահվի, անման կով կը դառնայ՝ կէս-սիմմէնթալ կէս-շվից:

Այստեղ ահա ես իմացայ, որ նա մի ժամ առաջ վեր էր կացել և գնացել տեսնելու այն երինջը, որի մասին խօսեց դեռ անցեալ երեկոյ. այդտեղից գնացել-իջել էր աղբիւրի մօտ՝ տեսնելու կովերի նախիրը:

— Մանրացել, շատ են մանրացել անասունները. իմ առաջ կթեցին ամենալաւ կովը, և, երևակայեցէք, տուեց ընդամենը 4 բաժակ կաթ և այն էլ ու՞ր, այս ալպերում, յուլիս ամսին:

Մինչ այդ, մեզ մօտեցան դարձեալ 5—6 գիւղացիներ, որոնք մեծ փափախները հանում և գլուխ էին տալիս մեզ:

— Չէի՞ք ուզի սրանց գութանները տեսնել,—դարձաւ ինձ Քալանթարը:

Ես, ի հարկէ, ասացի, որ շատ կուզեմ. բայց, ճիշդն ասած, տեսնելու ոչ մի ցանկութիւն չունէի, քանի որ հէնց այս ճանապարհորդութեան ժամանակ հարիւր անգամ տեսել էի և գիտէի, թէ ինչ է հայի գութանը, և եթէ մի բան կուզէի՝ այդ այն էր, որ շուտ մի տաք թէյ խմէինք, եփած փրփրող կաթ, ու ճանապարհ ընկնէինք:

Բայց ես գիտէի, որ Քալանթարի հետ ճանապարհորդելիս, անձնական ցանկութիւնները պէտք է ծալել-դնել խուրջին և գնալ նրա ետևից:

Գնացինք գիւղի մէջ:

Բակում հայկական երկանիւ սայլի մօտ ընկած էր մեր հին, պապենական գութանը. ճեղքված, մաշված, փայլուն վիթխարի խոփով, լուծերը վրան: Պարզ էր, որ գութանը մի օր առաջ վերադարձել էր հերկից:

Մօտեցանք, պտտեցինք սրա չորս կողմը:

— Այ, այժմ լսեք պ. Աթանասեանին, նա ձեզ կը պատմէ գութանների մասին,—դարձաւ գիւղացիներին Քալանթարը:

— Ըհը,—մտածեցի ես,—սա ուզում է որ ես այստեղ, այս գիւղացիներին մի զեկուցում կարդամ գութանների մասին. և չը կարողանալով չեմ ու չում անել, կամայ թէ ակամայ սկսեցի իմ զեկուցումն ու զրոյցը:

Խօսեցի հինգ րոպէ, պատմեցի հայի գութանի պակասութիւնների մասին, եւրոպական երկաթէ գութանների առաւելութիւնների և այլն: Սրանք, այս գիւղացիները, ուշադրութեամբ լսեցին ինձ, տուեցին մի քանի հարցեր և արին մի քանի առարկութիւններ: Ես վիճեցի: Վէճի մէջ մտաւ ինքը Քալանթարը, եկան ժողովվեցին ուրիշները: Եւ այստեղ իմացանք, որ Տամէրենց Հայրոն գնել է երկաթի նոր գութան, որ նրա տունը հեռու չէ. և Քալանթարը առաջարկեց.

— Եթէ շատ հեռու չէ, գնանք տեսնենք, այն ժամանակ աւելի հասկանալի կը լինի ձեր ասածները սրանց համար:

Եւ գնացինք Տամէրենց Հայրոյի տուն, որը, պէտք է խոստովանած, բաւական հեռու էր. մտանք նրա բակը. գնացին և դուրս բերեցին եւրոպական Գէնի գութանը, դրին մէջտեղ և ստիպեցին ինձ խօսել սրա կազմի, յատկութիւնների և տարբերութիւնների մասին. ստիպվեցի պտուտակը հանել, թուրը տեղը դնել, խոփը իջեցնել և, երբ զրոյցը աւարտեցի, դուրս եկաւ, որ մենք այս զրոյցների վրա գործ ենք դրել մէկ ու կէս ժամ:

Քալանթարի երեսը փայլում էր ուրախութիւնից. նա եօթներորդ երկնքումն էր:

— Տեսնո՞ւմ էք ինչ լաւ եղաւ. տեսանք, համեմատեցինք, խօսեցինք, համոզեցինք, իսկ դա մեծ, շատ մեծ բան է. ես հաւատացած եմ, որ մեր այս զրոյցը զուր չի անցնի, որ նրանք, եթէ նոր գութան առնեն, կը գան ձեզ մօտ քաղաք և ձեր խորհուրդներով կը ղեկավարվեն. ահա այսպէս պէտք է գործի զեմսկի ագրօնոմը, հրահանգիչը. իսկ մենք ձեզ հետ միասին զեմսկի հրահանգիչներ ենք, այնպէս չէ՞:

Ես համաձայնեցի նրա հետ և զգացի, որ, ճիշդ որ, մենք մի լաւ բան արեցինք, որ մենք մի քիչ աւելացրինք գիւղացու գիտակցութեան մէջ և այդ գիտակցութիւնը, այդ զգացումը ինձ ևս ուրախացրեց, ներքին գոհացում տուեց:

Օգտվելով առիթից, խոստովանում եմ, Քալանթարի բնաւորութեան մէջ կար վերյիշելու մի շատ հազուագիւտ գիծ. նա, որպէս երկար տարի գործած և շատ բան տեսած ու փորձված ագրօնոմ, գիւղատնտեսական բոլոր ճիւղերի մասին լաւ ծանօթութիւն ունէր. բայց երբ նրա մօտ կանգնած էր գիւղատնտեսական մի այլ ճիւղի մասնագէտ, Քալանթարը դառնում էր շատ համեստ և առաջարկում էր մասնագէտին խօսել, բացատրել. իսկ ինքը դառնում էր ամենաուշադիր ունկնդիրը: Միայն իր մասնագիտութեան՝ անասնապահութեան և կաթնատնտեսութեան խնդիրների մէջ էր, որ նա լսել էր տալիս իրան, բայց միշտ էլ մեծ ուշադրութեամբ լսում էր նաև իր խօսակցի արած հակաճառութիւնները, արժէք էր տալիս դրանց, նշանակում իր ծոցատետրի մէջ և տուն եկած ժամանակ, ասում էր ուրիշներին:

Ժամը արդէն 9-ն էր, երբ մենք տուն դարձանք. մեր իշխանի շուրջ ժողովվել էին մի քանի տասնեակ գիւղացիներ: Դա ինձ զարմացնում էր. օրը լի օր էր, աշխատանքի օր և գիւղացիները, փոխանակ դաշտ՝ իրանց աշխատանքին գնալու, մնացել էին մեզ հետ:

Երբ այդ նկատեցի տան տիրոջս, նա պատասխանեց.

— Գործը մեզանից չի փախչի, համա հազարից մի անգամ Քալանթարն ու պէսք մեր գիւղը չէք մտնի:

Այս խօսքերը շատ բան ասեցին մեզ...

Այո, զեմսկի ագրօնոմի, հրահանգչի կենդանի խօսքի ծարաւն էր, որ ստիպում էր այս խաւար, յետ ընկած, թշուառ գիւղացիներին մոռանալ իր հերկն ու գութանը, եզն ու խոտհարքը և, ժամերով շրջապատված մեզ, լսել մեր խօսքն ու ցուցմունքները:

Իսկ այդ կենդանի խօսքն է, որ ամենից աւելի պակասում է մեր ժողովրդին:

Ամեն ինչ գիր ու թուղթ, ամեն տեղ նոմէր ու ИСХОДЯЩІЙ, ВХОДЯЩІЙ, ամեն տեղ հրաման, հրաման ու ЦИРКУЛЯРЪ.

Իսկ կենդանի խօսք, կենդանի օրինակ չը կայ ու չը կայ...

Ես տեսայ, որ թէյի մասին մտածելը արդէն ուշ էր, արեգակը բարձրացել էր և ժամ առ ժամ սկսել էր այրել մեզ:

Մի թեթև նախաճաշիկից յետոյ, բերին մեր ձիերը և մենք ճանապարհ ընկանք. ճանապարհ ընկանք ոչ մենակ. մեզ ճանապարհ էին գցում ութ ձիաւորներ՝ հէնց մեր ունկնդիրներից, որը՝ նրանցից՝ ակլոր ձիու վրա, որը փալանով, որը մի չուլ գցած:

Սրանք գալիս էին մեզ հետ՝ բարի ճանապարհ ասելու մեզ:

Եւ մենք հեռացանք այս գիւղից, թողնելով մեր ետևում այս 10 ժամում 10-նեակ ծանօթներ՝ Դաւիթին, Եղիազարին, Հայրոյին, Սարիբէգին, Թէոսին, Դանիէլին. մարդիկ, որոնք մեզ վրա նայում էին որպէս իրանց բարեկամի, անկեղծ բարեկամի:

Օ՛, որ իմանաք, որքան դժուար է գիւղացիների մէջ անկեղծ բարեկամ գտնել. և մենք գտանք, գտանք շնորհիւ Քալանթարի բնաւորութեան առանձնայատկութեան, որ վարակում էր և ինձ: Ես այդ զգում էի:

Ա. Աթանասեան

---

*) Տես «Մշակ» № 237 և 241.

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աբասթուման, 25 նոյմ.

Մենք արտայայտում ենք մեր խորին թախիծը գիւղացիութեան խղճական բարեկամ Գրիգոր Արծրունու անմոռանալի գործակից Քալանթարի յանկարծական մահվան համար:

Տօնականեան քահանայ, Բենսանեան, Յակոբ Քեշիշեան, Սարգիս Յարոյեան, Յովհաննէս Յարոյեան, Մաղանդոսեան, Մինասեան, Տիգրանեան:

Ցխինվալ, 25 նոյմ.

Ցխինվալի հայ հասարակութիւնը արտայայտելով խորին ցաւ ազգի համար թանգագին հրապարակախօս և աշխատաւոր Քալանթարի վաղաժամ մահվան առիթով և սրբութեամբ յարգելով նրա մատուցած ծառայութիւնները հայրենիքին, բացի դրանից պատկառանքով խոնարհվելով նրա հազուագիւտ յատկութիւնների առաջ, հեռու խտրիչներից և կուսակցականութիւնից, մաղթում է յաւերժ յիշատակ այդպիսի ազնիւ, իմաստուն քաղաքացուն, հրապարակախօսին և աշխատաւորին:

Հասարակութեան լիազօր՝

Հոգաբարձու Յովհաննէս

—

Գրօզնի, 25 նոյմ.

Ցնցված՝ մեծ հասարակական գործիչ, հրապարակախօս, հայ գիւղացիութեան բարեկամ և խորհրդատու Քալանթարի յանկարծական վախճանի բօթով, արտայայտում ենք խմբագրութեանդ և ընտանիքին մեր սրտագին ցաւակցութիւնը:

Գուրգէնեան, Ղահրամանեան, Քոչարեան, Տէր-Յարութիւնեան:

—

Գուդաուտ, 26 նոյմ.

Ցնցված ժողովրդական գործիչ, «Մշակի» խորայարգ խմբագիր, հայ ժողովրդի լայն խաւերի մէջ կուլտուրա տարածող Քալանթարի անակնկալ մահվան բօթով, արտայայտում ենք մեր անկեղծ ցաւակցութիւնը:

Աշրաֆեան, Ղազանջեան

—

Գուդաուտ, 26 նոյմ.

Բազմայարգ Քալանթարի անակնկալ վախճանը առաջ է բերում հայերի դառն արտասուքը: Յանձին նրա զրկվում ենք ամենաանկեղծ գործչից, իսկ «Մշակի» խմբագրութիւնը՝ իր անձնուէր շիտակ վետերանից: Հնարաւորութիւն չունենալով ուղարկել պատուիրակ թաղման՝ Գուդաուտի ամբողջ հայ վշտակիր ժողովուրդը հաւաքվեց հոգեհանգստի:

Լիազօրներ՝ Ահարոնեան, Յակոբեան, Քօշկանեան, Եղիազարեան, Ղազանջեան, Մինասեան, Միրզոյեան, Մելքումեան, Թափիրեան:

—

Գրօզնի, 25 նոյմ.

Ցնցված մեր հասարակական գործիչ-հրապարակախօս և հայ գիւղացու բարեկամ ու խորհրդատու Քալանթարի յանկարծական մահվան լուրով, Գրօզնիի հայ եկեղեցական ծխական դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է ձեզ և հանգուցեալի ընտանիքին սրտագին ցաւակցութիւն:

Գուրգէնեանց

—

Սանահին, 28 նոյմ.

Ողբում ենք թանգագին Զաւարեանի և Քալանթարի վաղաժամ մահը. Թող մեզ բոլորիս մխիթարի այն միտքը, որ նրանք անօգուտ չանցրին իրանց կարճ կեանքը: Այսօր պրիստաւ Ստեփանեանցի ներկայութեամբ Ս. Նշանի աւագ քահ. Տէր-Գէորգը հոգեհանգիստ կատարեց հանգուցեալների համար:

Քալանթարեաններ, Ալեքսանդր Թումանեանց, տէր-Ներսէս Ենօքեանց:

—

Անդիժան, 28 նոյմ.

Այս րօպէիս իմացայ հայկական հասարակական գործիչների վետերան, մեծ հսկայ Ալեքսանդր Քալանթարի մահը: Ցնցված եմ անակնկալ հարուածի ծանրութիւնից և ողբում եմ հոգւոս խորքից համահայկական եթերի մեր պայծառ աստղի մթագնումը:

Մկրտիչ Յովսէփեանց

—

Սարգվար, 4 նոյեմբերի

Խորապէս ցաւակցում ենք անկեղծ գործչի, ժողովրդի ցաւով տողորված Ալ. Քալանթարի անժամանակ մահվան բօթի առիթով: Ցաւում ենք, որ Խորասանի հեռագրական թելի փչացման պատճառով անկարող եղանք ժամանակին արտայայտվել ձեզ հասած վշտի առիթով:

Յարգանք Ալ. Քալանթարի թարմ յիշատակին:

Սարգվարի հայ գաղութ

—

Ղաթարի հանքեր, 5 նոյեմբերի

Ընդունեցէք խորին ցաւակցութիւնս:

Զանգ. Սև-քարի դպրոցի ուսուցիչ

Արմէն Մաղաւուզեան

—

Բոստոն, 10 նոյեմբերի (ն. տ.)

Ռամկավարներս կողմանք Ալ. Քալանթարի կորուստը:

Խորին ցաւակցութիւն խմբագրութեան:

«Ազգ» շաբաթաթերթ

—

Բագու, 20 նոյմ.

Խորապէս վշտահար եմ թանգագին Ալ. Քալանթարի վաղաժամ վախճանի առիթով, Քալանթարի՝ իբրև հասարակական գործչի և իմ անձնական բարեկամի: Խնդրում եմ յայտնել նաև ընտանիքին իմ անկեղծ ցաւակցութիւնը: Հիւանդութեանս պատճառով անհնարին եղաւ ինձ իր ժամանակին արձագանք տալ հասարակութեան ամենախոշոր և գործունեայ սիւներից մէկի կորստեան:

Ջամշուտ Յարութիւնեան

—

«Մշակի» աշխատակիցներից, թղթակիցներից և համակրողներից բազմաթիւ անձինք ուղարկել են մեզ ցաւակցական գրութիւններ Ալ. Քալանթարի մահվան առիթով. և չը տեսնելով մինչև այժմ տպագրված «Մշակի» մէջ այդ գրութիւնները, նրանք տրտունջ են յայտնում այդ մասին: Գնահատելով տրտունջ յայտնողների ազնիւ զգացումները, որոնք բղխում են բնական ցանկութիւնից՝ հնարաւորութիւն տալ իրանց ևս մատուցանել հանգուցեալի յիշատակին իրանց յարգանքը, պարտք ենք համարում յայտնել, որ մինչև այժմ չը տպելու պատճառը տեղի սղութիւնն է: Մենք ստիպված ենք մաս-մաս տպել այդ գրութիւնները, որպէսզի լրագրական հերթական նիւթերը կանգ չառնեն:

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Բագուից Գէորգ Միրզաբէկեանը Ալ. Քալանթարի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն ուղարկել էր Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդին 15 րուբլի՝ թողնելով այն նրա տրամադրութեան տակ: Այժմ մեզ տեղեկացնում են, որ խորհուրդը Քալանթարի թաղման օրը այդ գումարով ձրի ճաշ է տուել չքաւոր աշակերտներին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆԸ

—o—

ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

I

Երզրում, 20 նոյմ.

Այս երեկոյ, ընդ հովանաւորութեամբ նորընտիր պատրիարք Զաւէն սրբազանի, կայացաւ երեկոյթ-ներկայացում՝ հայ գրերի գիւտի և տպագրութեան զոյգ յօբելեանների առիթով:

Ներկայ էին պատրիարք հայրը, առաջնորդ Սմբատ եպիսկոպոսը, Գարեգին վարդապետը, ուրիշ վարդապետներ, քահանաներ և այլն:

Ներկայացվեց Շանթի «Հին Աստուածներից» միայն երեք պատկեր, տեղական ոյժերով: Որպէս գաւառական բեմ, կարելի է գտնել շատ մեծ թերութիւններ թէ խաղի և թէ դերերի ըմբռնումների մէջ: Դեկօրացիան չափազանց աղքատ էր, ողորմելի աստիճան: Այս բոլորից զատ, ժողովուրդը արդէն մի բան չը կարողացաւ հասկանալ, որովհետև, բացառութեամբ մի քանիսի, հանդիսականները երբէք էլ ծանօթ չէին պիէսայի նիւթին. և այդ իսկ պատճառով շատ անմիտ բան դուրս եկաւ ամբողջ կառուցուածքից մի քանի բեկորներ միայն ներկայացնելը:

Տեղի ունեցան նաև երգեր, արտասանութիւններ, նուագ դաշնակի և ջութակի վրա երկսեռ սիրողների կողմից: Արդիւնքը՝ մօտ 30 ոսկի՝ յատկացված է Երիտ. Միութեան և Ազգանուէր Կանանց վարժարաններին:

Կ.

II

Մուշ, 16 նոյմ.

Անցեալ կիրակի, ամսոյս 13-ին, առաւօտեան ժամը 5-ին (ը. թ.) տեղւոյս ս. Մարինէ մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հայ գրերու գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի լրանալու կրկին յօբելեաններու մեծ տօնը: Հրաւիրուած էին յարանուանական հաստատութիւններու պաշտօնական և դպրոցավար անձնաւորութիւնները. Ներկայ էին Միացեալի և Հայուհեացի պաշտօնեաները իրենց աշակերտներով: Դժբաղդաբար այս անգամ ալ, ինչպէս միշտ, մեր հարուստ ջոջ-ազաները դասակարգն էր, որ կը փայլէր իր դատապարտելի բացակայութեամբ:

Հանդէսի բացումը կատարեց Տարօնի առաջնորդ Ներսէս եպ. Խարախանեան, և յետոյ սկսան աւուր պատշաճի ճառերը, երգեցողութիւններն և բանախօսութիւնները: Ս. Կարապետի ժառանգաւորաց վարժարանի կողմէն՝ յատուկ հրաւէրով՝ հանդէսին կը մասնակցէին երեք գլխաւոր ուսուցիչներ՝ Մկր. Տէր-Մկրտչեան, Միհրան Տէր-Յովհաննէսեան և Մակար Խարախանեան:

Առաջին երկուքը բանախօսեցին Սահակի և Մեսրոպի կեանքէն, իսկ վերջինը արտասանեց Ահարոնեանի «Յարգանք քեզ» ոտանաւորը: Խօսեցան և ճառեցին բոլոր յարանուանական հաստատութեանց ներկայացուցիչները... Ի լրումն ամենայնի հանդէսին մեծ փայլ տուաւ Վանի բողոքական միսիօնար վեր. հ. Բ. Շըլուրն, որ հազիւ մէկ օր առաջ ժամանած էր և որ խորին շնորհակալութիւն յայտնեց այդ պատեհ առիթը ներկայացողներուն, որուն շնորհիւ այդ օր կարողացան հայ հասարակութեան լայն խաւերու հետ շփուիլ...

Այդ օրուան հանդէսին շօշափելի արդիւնքն այն եղաւ, որ անգամ մը ևս շեշտուեցան մեր քաղաքի յարանուանական եղբայրակցութեան սիրոյ և համերաշխութեան հաւաստիացումները, որ մեծ կարևորութիւն ունի՝ գէթ ներկայիս մեր հասարակական դաստիարակական գործին մէջ:

Հանդէսը վերջացաւ երեկոյեան ժամը $9\frac{1}{4}$-ին: Բարոյական տպաւորութիւնը շատ քաղցր էր ժողովրդական խաւերու մէջ:

Յօբելեանական այդ մեծ տօնահանդէսը դժբաղդաբար ոևէ նիւթական օգնութեան գործ չկրցաւ բերել:

Թախիծ

Յ. Գ.—Հանդէսին յաջորդ օրը հեռագիր ստացուեցաւ Կ. Պոլսոյ ազգ. պատրիարքարանէն, թէ Պոլսոյ ազգ. երեսփոխանական ժողովը իր վերջընթեր նիստին մէջ որոշեր է այդ յօբելեանական տօնի առթիւ հանդէս կատարել Աշտիշատի մէջ՝ ս. Սահակ հայրապետի գերեզմանին վրայ: Սակայն դժբաղդաբար հեռագիրը չափազանց ուշ հասնելուն՝ այդ ծրագիրը անկարելի էր այլևս գործադրել տալ:

Արդէն տեղւոյս ազգ. իշխանութիւնն առաջուց այդպէս ալ ծրագրած էր՝ վերջին տօնակատարութիւնը ընել Աշտիշատի մէջ, սակայն տեղական զանազան հանգամանքներ արգելք հանդիսացան այդ գեղեցիկ նպատակին իրագործման:

Թ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

Ալ. Քալանթարի անուան հիմնվելիք ֆոնդի օգտին ստացանք Արմաւիրից՝ Զաւադբէկ Բոլուղեանից՝ 10 րուբլի:

—

Նոյնից՝ Ս. Զաւարեանի մօր ցանկութեան համաձայն հանգուցեալի հայրենիքում ապագայում հիմնվելիք գիւղատնտեսական դպրոցի օգտին—10 րուբլի:

—

Նոյնից՝ յօգուտ Խ. Աբովեանի արձանի կառուցման ֆոնդի՝ «որ կազմում էր հանգուցեալ Կ. Խատիսեանի վերջին իղձերից մէկը»—10 րուբլի:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՔ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Մայկօպ, 3 նոյեմբերի

Այսօր խուռն բազմութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարվեց Զաւարեանի, Քալանթարի և Խատիսեանի համար: Միացնում ենք մեր վիշտը ժողովրդի վշտի հետ թանգագին և անմոռանալի հասարակական գործիչների կորստեան առիթով: Թող մեր և ապագայ սերնդի սրտերում պահպանվի պայծառ յիշատակը նրանց ազնիւ և անձնուրաց գործունէութեանց մեր ամենալաւ գաղափարներին:

Ի դէմս հայկական գաղութի հայոց դպրոցի հոգաբարձութիւն, Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան ճիւղը, Հայուհայոց Բարեգործական Ընկերութիւնը։

—

Մայկոպ, 3 նոյեմբերի

Այսօր խուռն բազմութեամբ հոգեհանգիստ կատարվեց Զաւարեանի, Քալանթարի և Խատիսեանի համար։ Մեծ կսկիծով միացնում ենք մեր վիշտը ժողովրդի վշտի հետ նրա ամենալաւ զաւակների վաղաժամ վախճանի առիթով։ Թող մեզ մխիթարութիւն լինի այն յոյսը, որ նրանց ցանած սերմերը կը տան փառաւոր ծիլեր հայ ժողովրդի բարօրութեան համար։

Վահան քահանայ Ասկարեանց, Մառուկեան, եղբարք Տէր-Պետրոսեաններ, Փիրումեան, Խուցիեվ, Մնացականեան, եղբ. Օնիկեաններ, Շապօշնիկեան, Տէր-Կարապետեան, Կոստանդեանց, Կարապետեան։

—

Գրօզնի, 3 նոյեմբերի

Հայ հասարակութեան մեծ բազմութեամբ այսօր հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ գործիչներ Քալանթարի, Զաւարեանի և Խատիսեանի համար։ Ի դէմս հայկական գաղութի յայտնում ենք մեր սրտագին ցաւակցութիւնը մեր ժողովրդի երեք կորուստների առիթով։

Տէր-Սահակեան քահանայ, հոգաբարձուներ՝ Խանգելդեան, Ղազիեան, Բէգլարեան, Գուրգէնեան։

—

Ղուբա, 30 հոկտ.

Երէկ, ս. պատարագից յետոյ հայոց եկեղեցում կատարվեց հանդիսաւոր հոգեհանգստեան կարգ վաղաժամ վախճանված անփոխարինելի գործիչներ Ս. Զաւարեանի, Ալ. Քալանթարի և Կ. Խատիսեանի յիշատակին։ Յայտնում ենք մեր ամենաանկեղծ ցաւակցութիւնը հանգուցեալների հարազատներին և յարգողներին։

Գործակալ Տէր-Սիմէօնեան, Սարումեաններ, Ալէքեան, օրիորդ Գրիգորեան, Բարսեղեան, Գրիգորեան, Միքայէլ Գրիգորեան, Հայկ Յովհաննիսեան, Թելլարեան, Յովհաննիսեան։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. ՄԻԼԼԵՐ

—

Պետերբուրգում նորերս կնքեց իր մահկանացուն յայտնի արևելագէտ և գիտնական, ակադեմիկոս Վսեվոլոդ Միլլէրը, որ նաև Լազարեան ճեմարանի նախավերջին վերատեսուչն էր։

Միլլէրի գործունէութիւնը կապ ունի նաև հայագիտութեան և կովկասագիտութեան հետ։

Նա յայտնի էր նաև իբրև հմուտ սանսկրիտագէտ և հետազօտող ռուսական հին պօէզիայի, լինելով թարգմանիչ «Слово о полку Игоря» ժողովրդական պօէմայի։

Միլլէրը մի ճանապարհորդութիւն կատարեց Կովկասում 1879 թ. և զբաղվեց Կովկասի իրանական լեզուների բաղդատական քերականութեան ուսումնասիրութեամբ։ Ուսումնասիրելով օսէրի լեզուն, նա 1880 թ. ուղևորվեց Օսէտիայի լեռները և գրի առաւ օսէտեան հէքիաթները և աւանդութիւնները։ 1884-ին նա կատարեց իր չորրորդ ճանապարհորդութիւնը Կովկասում Մ. Մ. Կովալևսկիի հետ և շրջեց Կաբարդայի լեռնային համայնքները և ապա միայնակ՝ օսաբնակ տեղերը, հաւաքելով նիւթեր օսէտական բառարանի համար։ 1886-ին նա ճանապարհորդեց հնագիտական ուսումնասիրութիւնների նպատակով Չեչենիա, Օսէտիա և Կաբարդա։

Երկար ժամանակ նա վարեց Լազարեան ճեմարանի վերատեսչի պաշտօնը։ Այժմ վախճանվեց 77 տարեկան հասակում։

Նրա բազմաթիւ գիտնական աշխատութիւններից կը յիշատակենք մի քանիսը. 1) «Օսէտական ուսումնասիրութիւններ» I, II և III մաս, որոնք հնարաւորութիւն տուեին նրան ձեռք բերել դօկտորի աստիճան, 2) «Նիւթեր Կովկասի հնագիտութեան մասին», որ հրատարակեց Գիտութեանց Ակադեմիան, 3) «Օսէտիայի սարերում», 4) «Կովկասեան աւանդութիւնները՝ լեռներին շղթայված հսկաների մասին», 5) «Կովկասեան լեգենդաներ», 6) «Իրանեան արձագանքներ Կովկասի ժողովրդական հէքիաթների մէջ» և 7) «Կովկասեան հէքիաթներ կիկլօպների մասին»։

Միլլէրը գիտութեան մէջ մեծ հետք և անուն կը թողնի լեզուագիտութեան ուսումնասիրութեան մասին իր ստեղծած մեթոդով։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կովկասեան քաղաքների ներկայացուցիչների երկրորդ համագումարի համար մի շարք անձինք պատրաստել են զանազան զեկուցումներ։ Այսպէս օրինակ իշխ. Ն. Արղութեան-Երկայնաբազուկ՝ կեանքի թանկութեան և կովկասեան քաղաքների մատակարարական գործը կանոնաւոր հիմքերի վրա դնելու մասին, քաղաքների լուսաւորութեան մասին։ Մ. Աթաբէգեանը՝ քաղաքների օբէնտրական գործունէութեան մասին և այլն։

◆ Թիֆլիսում դարձեալ ընդարձակ չափով տարածվել է քութէշ հիւանդութիւնը։

◆ Լուրերի համաձայն, Վրաստանի էկզարխը կը մեկնէ այս օրերս Լիվադիայից դէպի Թիֆլիս։ Նրա Լիվադիայում մնալուն տրվում է կարևոր նշանակութիւն։

◆ Սովորական շաբաթ օրվայ փոխարէն, Հասարակական ակումբի հերթական երեկոն տեղի կունենայ վաղը, կիրակի, երեկոյեան ժամը 8-ին։ Միֆֆէրտը կը կարդայ ռեֆերատ «Քաղաքը և գիւղը» թեմայով։ Դասախօսը կը պատմէ արտասահմանում ստացած իր անձնական տպաւորութիւնները ևս։ Ընդմիջումի ժամանակ տեղի կունենայ երաժշտական բաժին Սոլովիեվայի աշակերտաշակերտուհիների մասնակցութեամբ։

◆ Այսօր, շաբաթ, երեկոյեան ժ. 7½-ին, նշանակված է Կով. Հայոց Բարեգ. Ընկերութեան երկրորդ արտակարգ ընդհանուր ժողովը։ Այս ժողովը լինելով երկրորդը՝ կը կայանայ որքան անդամ ներկայ լինի։

◆ Այսօր, երեկ. ժամը 8-ին, Աշխարհագրական Ընկերութեան դահլիճում տեղի կունենայ Մոսկվայի Հնագիտական Ընկեր. Կովկ. բաժանմունքի անդամների ժողովը, ուր Ջանաշվիլին կարդալու է ռեֆերատ։ Նիստը հրապարակային է։

◆ Վաղը, կիրակի, առ. ժամը 10-ին, քաղաքային բորսայի աշխատանքի տանը, իշխանութեան թոյլտուութեամբ, տեղի կունենայ Թիֆլիսի կօշկակարների պրօֆէսիոնալ միութեան անդամների ընդհանուր ժողովը։

◆ Թիֆլիսից բուսաբան Վորոնովը ուղարկվում է Եւրոպա՝ Բեռլին, Ժընէվ և այլ քաղաքների բուսաբանական այգիների գրութեան հետ ծանօթանալու համար։

◆ Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ, Ալէքսանդրեան այգու վերին մուտքի մօտ, այսօր, շաբաթ, երեկոյեան ժ. 4—5 ա. Գուրգենիձէն ռուսերէն կը խօսէ «Նէլլօ և Պատրաշ» երեխաների համար։ Վաղը, կիրակի, առ. ժամը 9½—11 պ. Գարդիշեանը կը խօսէ երեխաների համար Ջրասուզների մասին։ Ժամը 11—12 տ. Լաշքարաշվիլին կը խօսէ խելօք երեխաների մասին։ Երեկ. ժամը 6—7 հասակաւորների համար բժ. Ֆլօրինան ռուսերէն կը դասախօսէ առողջութիւնը պահպանելու մասին։ Մուտքը բոլորի համար ձրի է։

◆ Պետական Դումայի անդամ սօց.-դեմ. Սկօբելեվը տուեալներ է ստացել հարցապնդում ուղղելու Դումայում Բագուի բանտի դէպքերի մասին։

◆ «Баку»-ի մէջ կարդում ենք. «Կուլտուրական Միութիւնը խնժեներ Ն. Ալիբէգեանից ստացել է հետևեալ նամակը. «Ներկայացնելով սրա հետ միասին 1300 ռուբլի խնդրում եմ ընդունել այդ դրամը իմ կողմից՝ անխոնջ աշխատաւորի և մեր ղեկավար Կ. Խատիսեանի մեզ ամենից սիրելի յիշատակը յաւերժացնելու համար։ Ուղարկված փողերից 1000 ռ. խնդրում եմ յատկացնել Բագուի Կուլտ. Միութեան սեփական շէնքի ծախքերին, իսկ 300 ռ. Երևանում Խաչատուր Աբովեանի արձանը կանգնեցնելու համար»։

◆ Բաթումից մի քանի մանրամասնութիւններ են հաղորդում այնտեղ սպանված աւազակի մասին։ Սպանվածի անունն է Ալէքսէյ Տուշին (Պուրիա), մէկը՝ Միհրան Անանեանին գերողներից։ Ծանր վիրաւորելով հետապնդման ժամանակ երկու գաղանի ոստիկանների, յանցագործը, վիրաւորվելով մահացու կերպով, չը կամեցաւ յայտնել իրա ով լինելը և տալ որևէ բացատրութիւն։ Նրա մօտ գտնվեցին 6000 ռ., նամակներ, մաուզերի ատրճանակ և 60-ից աւելի փամփուշտ։

◆ Թոյլատրված է նոյեմբերի 18-ին Գրօզնայում կայացնել Թերէկի նաւթարդիւնաբերողների XIX հերթական համագումարը Ջենգերի նախագահութեամբ։

◆ Նոր-Նախիջևան քաղաքի համար քաղաքագլխի պաշտօնակատար ընտրելու ժամանակ Կ. Մ. Պոպովեանը ստացել է 32 սպիտակ և 10 սև. քուէարկութեանը մասնակցում էին 42 ձայնաւոր։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Արտիստական Թատրոն

Հինգշաբթի, նոյեմբ. 7-ին, Արտիստական Ընկ. Թատրոնում Զարէչնիի ռուս դրամատիքական խումբը ներկայացրեց Գոգոլի «Վերաքննիչ» 5 գործ. կոմեդիան, նուիրված Միխայիլ Սեմեոնովիչ Շչէպկինին, նրա ծննդեան 125-ամեակի առիթով։

Ներկայացումից առաջ խմբի ռեժիսոր Տուգանովը կարդաց մի տեսութիւն հանգուցեալ դերասանի մասին։

Նշանաւոր բեմական գործիչ Միխ. Սեմ. Շչէպկինը ծնվել է 1788 թ. Կուրսկի նահ. մի ճորտ ընտանիքի մէջ։ Սկզբնական կրթութիւնը ստացաւ Սուջա գաւառական քաղաքի դպրոցում և յետոյ Կուրսկում։ Զգալով իր մէջ դերասանական ձիրք՝ նա աջողութեամբ խաղում էր Կուրսկի բեմի վրա, իսկ 1822 թ. նրա հռչակը, որպէս տաղանդաւոր կոմիկի, այնքան տարածվել էր, որ նա հրաւիրվում է Մոսկվայի Կայսերական թատրոնի խմբի մէջ։

Սկզբներում հանգուցեալ արտիստը խաղում էր գլխաւորապէս Մոլիէրի հերոսը, որովհետև այդ ժամանակ չը կային իրան համապատասխան ռուսաց թատրոնական գրուածքներ։ Բայց շուտով Շչէպկինը թէ Մոսկվայում և թէ Պետերբուրգում ծանօթութիւն է հաստատում 30-ական, 40-ական և 50-ական թւականների ռուս ականաւոր գրողների և ուսումնական անձանց հետ, որոնք գովասանքով են խօսում նրա տաղանդի մասին։ Առանձնապէս մտերմանում է Շչէպկինը Գոգոլի հետ, որ այդ շրջանում վճռում է դնել ռուսական կոմեդիայի հիմքը։ 1831 թ. Գրիբոեդովը գրում է «Խելքից պատուհասը», որի մէջ շնորհալի կերպով Շչէպկինը կատարում է Ֆամուսովի դերը։ Սակայն աննման քաղաքապետ է հանդիսանում հանգուցեալը Գոգոլի «Վերաքննիչի» մէջ։

Շչէպկինը ստեղծագործող տաղանդ էր. նա բարձրացրեց ռուս թատրոնը և ուղեցոյց ծառայեց յետնորդների համար ևս։ Եւ երբ տօնվեց նրա բեմական գործունէութեան 50-ամեակը, նա դարձաւ ամբողջ Ռուսաստանի մեծարանքի առարկայ։ Խընճոյքին ջերմ ճառեր արտասանեցին՝ Գոնչարովը, Տուրգենևը, Տօլստոյը և այլն։ Այդ օրը տօնվեց առաջին անգամ Ռուսաստանում աշխատանքի տօնը։

Շչէպկինի մահը՝ 11 օգոստ. 1863 թ. խոր վիշտ պատճառեց ամենքին։ Նրան թաղեցին իր ժամանակակից յայտնի գործիչ Գրանովսկիի գամբարանի կողքին, իսկ գերեզմանաքարի վրա մակագրվեց սոսկ երկու վերին աստիճանի նշանակալի խօսք՝ «արտիստ-մարդուն»։

Տուգանովի արած այդ տեսութիւնից յետոյ սկսվեց «Վերաքննիչի» ներկայացումը։ Ի պատիւ հանգուցեալ մեծ արտիստի՝ քաղաքապետի դերը յանձն էր առել մի այնպիսի խոշոր բեմական ույժ, ինչպիսին Զարէչնիի խմբի մէջ հանդիսանում է Բորօզդինը, որի խաղը ինքնատիպ, շնորհալի ու գեղեցիկ էր։ Շատ ենք տեսել ուրիշ դերասանների յիշեալ դերում, բայց Բորօզդինը թէ այդ և թէ նման դերերում շատ աջող է ու վարպետութեամբ կատարող։

Բաւարար էին միւս դերակատարները։ Խլեստակովի դերակատար Բէցկին թոյլ էր։

Թատրոնում կար բաւականին բազմութիւն, որի խոշոր մասը աշակերտութիւնն էր։

Այսօր կը խաղացվի Շէքսպիրի «Օթելլօն»։ Ե.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, 4 նոյեմբերի

Հանգուցեալ Ալ. Քալանթարի եղբայրները խորին շնորհակալութիւն են յայտնում այն բոլոր հիմնարկութիւններին, խմբագրութիւններին և անձանց, որոնք իրանց ներկայացուցիչների միջոցով, հեռագիրներով, նամակներով և դամբանականներով հանգուցեալի յիշատակը յարգեցին և իրանց ցաւակցութիւնը յայտնեցին վշտացած ազգականներին։

Այդ բուռն համակրանաց և յարգանաց ցոյցերն զգալի մխիթարանք էին այն մեծ և ծանր կորստեան մէջ, որ ունեցան Ալէքսանդր Քալանթարի մտերիմները։

Ամենամեծ յարգանօք՝

Արշակ Քալանթար

ՕՐՈՒԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Օդեսսայում քութէշ հիւանդութիւնը այն աստիճան տարածվել է, որ կրթական հաստատութիւնների մեծ մասը փակ է։

◆ «Рѣчь»-ին հաղորդում են, որ արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեայ Պետրովի գործի քննութիւնը ցոյց է տուել, որ առաջինը նա է հայհոյել կոնդուկտորին և միւս մարդկանց, իրան պահել է չափազանց անպատշաճ և ծաղրել է շրջապատողներին։

◆ Ամերիկական մի լրագիր մրցանակ է նշանակել Իուշկևիչին սպանողներին որոնելու համար։ Կարելի է, որ նա իր սեփական լրտեսներին ուղարկէ Կիեվ այդ նպատակով։

◆ Թիւրքիան բանակցութիւններ է սկսել Սերբիայի հետ հաշտութեան պայմանագիր կապելու մասին։

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՕՆՈՐՐԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԵՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
,,SALO—ՊԻՉԻԼԻՆ‘‘

Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործածելու ձեռնարկը կցվում է արկղիկին։ Իսկականը միատեսակ արկղիկներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։

Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընթացք։

ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека В. Конгейма.

Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։

Ծախվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։

(Ը.) (П. 22276) 0 44

Լոյս տեսաւ և վաճառվում է

Ա. ԱԲԵՂԵԱՆԻ

կազմած

Ուղղագրակ. բառգրքոյկը

երկրորդ տպագրութեամբ, բարեփոխած և լրացրած ՈՒՂՂԱԳՐ. ԲԱՌԳՐՔՈՅԿԸ պարունակում է 1) մօտ 10,000 բառերի ցանկ, 2) Ուղղագրական կանոններ։ Օժանդակ ձեռնարկ հայոց լեզուի ուղղագրութիւնը սովորելու համար։ 256 երես, գինը 20 կոպէկ։ Դիմել բոլոր գրավաճառներին։ Պահեստը Թիֆլիսի «Գիր» գրախանութում։

(Հ.Զ.) 1016. 6—1

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ցերեկվայ ժամը 11½-ին պատարագից յետոյ, նոյեմբերի 10-ին 1913 թ., Քամոյեան ս. Գէորգ եկեղեցում կայանալու է ծխական ընդհանուր ժողովի շարունակութիւնը։

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) 1912 թ. տարեկան հաշւի քննութիւն.
2) 1913 թ. նախահաշւի քննութիւն.
3) Հոգաբարձութեան և դպրոցի գործունէութեան տեղեկագրի ընթերցումը.
4) Ծխական տուրք և նրա իրագործումը.
5) Հոգաբարձութեան և երէցփոխի հրաժարականները և ամբողջ կազմի նոր ընտրութիւն.
6) Վերստուգիչ յանձնաժողովի երեք անդամի ընտրութիւն։

Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու
Հոգաբարձութիւն

(Ա.Օ.) 1009. 2—1

Ա. ԿԻՎԻՏ

Պատրաստում է ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ համար, նոյնպէս և գիմնազիական ու միջնակարգ բոլոր դպրոցները մտնելու, նաև I կարգի կամաւոր զինուոր պատրաստվելու համար։ Ըստ ցանկութեան՝ Ա. Կիվիտ վերցնում է իր վրա ամբողջ պատասխանատուութիւնը քննութիւնների աջողութեան վերաբերմամբ։ Ընդունելութիւնը ցեր. ժամը 12—1-ը և երեկ. ժամը 5—6-ը։ Ելիզավէտինսկայա փող. № 142 (անկիւն Պիրոգովի փող.)։

(Ա. Օ.) 972. 10—8

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Առևտրի և Արդիւն. Մինիստր. իրաւասութեան ներքոյ գտնվող Առևտրական գիտելիքների Կուրսերի ղեկավար

Տ. Մ. ՓԻԼՕՑԵԱՆԻ

հետևեալ նոր աշխատասիրութիւն-ձեռնարկները.

I.

ՁԵՌՆԱՐԿ

առևտր. և բանկային ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ, իտալական կրկնակի սիստեմով։ Տեսական և գործնական մաս։ Գիրքը բաղկացած է 470 էջից և արժէ 3 ռուբ.։

II.

ՁԵՌՆԱՐԿ

առևտր. թղթակցութեան՝ առևտր. դպրոցների և հաշւապահական կուրսերի համար։ Գինը 1 ր. 30 կ.։

III.

Առևտրական

օրէնսգիտութիւն

առևտրական կուրսերի ծրագրի համապատասխան գործածելի։ Գինը 80 կոպ.։

Գլխաւոր պահեստը կուրսերին կից (Тифлисъ, Михайловскій пр., № 24. Тел. 9—76). «Հաշւապահական Ձեռնարկը» ուղղակի պահեստից պահանջողները ճանապարհածախք չեն վճարում։

(Ե. Հ. Զ.) 974. 5—4

ՄԵՂՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՒՆԸ

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՀԱՒԼԱԲԱՐ (Կախեթինսկի հրապարակ, Լազարեվսկի փողոց № 1, Հաւլաբարի կլուբի շէնքում)։

№ 4 տրամվայը կանգնում է մի քանի քայլ հեռաւորութեան վրա։ Բոլոր արհեստանոցներում, ինչպէս նախկին տարիները, ընդունվում են ամեն տեսակ պատուէրներ՝ կանանց և երեխաների զգեստներ, (փորձը 2 անգամից ոչ աւել և տրամվայի ծախսը վերջվում է կարելավարձից), սպիտակեղեններ, հարթակարի պատուէրներ, ֆորմէննիյ չորեր, աշակերտական և բանւորական զգեստներ, վերմակներ, ներքնակներ, վերմակի սաւաններ հարթակարով և այլն և այլն։

Գուլպայագործական արհեստանոցում աշակերտուհիների և պատուէրների ընդունելութիւնը հոկտեմբերի 15-ից։

Կարտօնաժի արհեստանոցում ընդունվում են պատրաստելու ամեն տեսակ տուփեր՝ ծխախոտի, կոնդիտերսկի, ապտեկարսկի, շերամի, զգեստների, կօշիկների և այլն։

ԳՆԵՐԸ ՇԱՏ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ։

(Ե. Զ.) 800. 15—15

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐՈՒՄ

ազատ տեղ չը լինելով աշակերտների ընդունելութիւնը դադարեցված է։ Երկրորդ դասընթացքները, որ սկսվելու է 1914 թ. յունվարի 15-ին, մտնել ցանկացողները կարող են վաղօրօք գրվել։ Николаевская 22. Телефонъ 744

1017. 5—1

Կ. Հ. Բ. Ընկերութեան միջոցներով պահվող դպրոցների համար հարկաւոր են մի շարք

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ եւ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

Պայմանների մասին դիմել Ընկ. Գրասենեակը մինչև նոյեմբերի 20-ը հեռագրով կամ խնդրագրով (Երևան-Արարատեան հրապարակ № 7. ս. տ.)։ 1018. 2—1

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

,,ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿ ԵՐԳԵՐ‘‘

Գրի առաւ և դաշնակեց ԿՈՄԻՏԱՍ վարդապետ

№ 13—22. Տասը երգ նոտաներով (Քէլէր ցոլէր, Քէլէ քէլէ, Սար սար, Կանչէ կռունկ, Ես սարէն կուգայի, Չինչ ու վինչ, Ալագեազ, Խնկի ծառ, Ալ այլուղ, Կուժն առայ). . . . . 1 ր. 50 կ.

№ 23—32. Տասը երգ նոտաներով (Առաւօտեան բարի լուս, Շորորա Անուշ, Հով լինի, Կուժն առայ, Սարէն ելաւ, Գնա գնա, Օրօ՛ր Ադինօ, Սոնա եար, Խումար, Քաղհան). . . . . . . 2 ր.

(Հ.) 1015. 2—1 Պահեստը «Գիր» գրավաճառանոցում։

ԳԱՅԻԱՆԵԱՆ ԴՊՐ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

խնդրում է Մողնու եկ. ծխականներին, կիրակի, նոյեմբերի 10-ին, ցերեկ. ժամը 12-ին, շնորհ բերել դպրոց, ուր սրբազան առաջնորդի թոյլտուութեամբ ժողով է լինելու։ Ժողովի զբաղմանց առարկաներն են՝ անցած տարվայ ելից և մուտից հաշիւների վերստուգութիւնը և այս տարվայ նախահաշւի քննութիւնը։ Նոյն ժողովին պիտի ընտրվի երէցփոխ եկեղեցու համար։ Ներկայ ժողովը երկրորդ անգամը հրաւիրվելով՝ կը կայանայ որքան ծխական էլ ներկայ լինի։

1004. 2—2 Նախագահ հոգաբարձութեան՝ Նիկ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԹԻՖԼԻՍ, ԴՎՈՐՑՈՎԱՅԱ ՓՈՂՈՑ, ՑԵԼԵՖՈՆ 2—83.

ԸՆՏԻՐ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԿԵՐՈՍԻՆԻ ԼԱՄՊԱՆԵՐ ԹԷ ԽՈՀԱՆՈՑԻՆ ԵՒ ԹԷ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ

ԿԵՐՈՍԻՆՕ-ԿԱԼԻԼ ԼԱՊՏԵՐՆԵՐ

(Զ.) II. 957. 0—2

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ

ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ

(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր և այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արևագերէն լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։

Տ ե լ ե ֆ ո ն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный